

15-րդ

ՀԱՆՐԱ

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՀՐԱՏԱՐԱՐԱԿԱԳՈՒԹՅՈՒՆ «ՀՅՈՒՍԻՍԱՑԻՆ ԿՈՎԿԱՅ»
1932 թ. ՌՍՏՈՎ-ԳՈՂ

082

տ-23

✓A444
A51

082
m-23

23 JUN 2009
Պրոպագանդայի և հասարակական կրթության նախարարություն

ՏԱՄՆՅԵՎՀԻՆԳԵՐՈՐԻ Զ Ա Ր Կ

(ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ)

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ XV ՏԱՐԵԼԻՑ



ՀՐԱՏԱՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ
«ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ»
ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱԺԻՆ

ՀՐԱՏԱՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ «ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ»
1932 թ. ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ

11 3 AUG 2013

15821



59273-66



Книгоиздательство
"СЕВЕРНЫЙ КАВКАЗ"

ՏԱՍՆՅԵՎՃԻՆԳԵՐՈՐԴ ՀՈԿՏԵՄԲԵՐ

1932 թվի նոյեմբերի 7-ին, հին տոմարով հոկտեմբերի 25-ին, լրանում է 15 տարին այն օրից, յերբ աշխարհի մեկ վեցերորդ մասում հաստատվեց պրոլետարիատի իշխանությունը:

15 տարի առաջ, մարդկային պատմության մեջ առաջին անգամ, մի հսկա աշխարհամասում հաստատվել է պրոլետարիատի դիկտատուրան:

Այս դիկտատուրան ձևակերպվել է վորպես բանվորների և աշխատավոր գյուղացիության խորհրդների իշխանությունը:

Խորհրդները խորտակեցին ու վոչնչացրին բուրժուազիայի ու կալվածատերերի իշխանությունը և նախկին ցարական Ռուսաստանի փոխարեն ստեղծեցին Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն:

Պրոլետարիատն այս հաղթանակը ձեռք բերեց իր կոմունիստական կուսակցության, բուլշևիկների կուսակցության ղեկավարությամբ և Լենինի առաջնորդությամբ:

1917 թվի հոկտեմբերի 14-ին ընկ. Լենինը գրում էր.

«Միայն ճշմարտությունը, միայն շահագործվող մասսաների հուզմունքի և զրդիոի գեացմունքը մեզ չէր տանի դեպի սոցիալիզմին հասցնող ուղին: Բայց յերբ կապիտալիզմի շնորհիվ աճեց բանկերի, սինդիկատների, յերկաթուղիների և դրանց նման կազմակերպությունների նյութական ապարատը, յերբ առաջավոր յերկրների փորձը կուտակեց տեխնիկայի հրաշքների պահեստներ, վորոնց գործադրումը կապիտալիզմի արգելակին է հանդիպում, յերբ զիտակից բանվորներն ստեղծեցին քառորդ միլիոնանոց բանակ, վոր պլանաչափ իրենց ձեռքն առնեն ապարատն ու նրան ընթացք տան բոլոր աշխատավորների և շահագործողների ոժանդակությամբ, յերբ կան այս պայմանները, այն ժամանակ աշխարհիս յերեսին չի գտնվի մի ուժ, վորը բուլշևիկներին խանգարի—յեթե նրանք չը վախենան—իրենց ձեռքում պահել այն (ապարատը թարգ.) մինչև համաշխարհային սոցիալիստական հեղափոխության հաղթանակը»:

Լենինի այս խոսքերը բացատրում են պրոլետարիատի հոկտեմբերյան հաղթանակի պատճառները, բացատրում են թե ինչպես պրոլետարիատը կարողացել է ահա 15 տարի իշխանությունը պահպանել և խորհրդային յերկրում հաղթականորեն սոցիալիզմ կառուցել: Ինչպես տեսնում ենք, Լենինն ապացուցում է, Վոր մարդկություն անցյալ զարգացումը ստեղծել է բոլշևիզմի հաղթության պայմաններ:

Այդ պայմանները և բոլշևիզմի վճռականությունը, համարձակությունը, զխցիպիւնան և անձնվիրությունը ստեղծեցին պրոլետարիատի հաղթանակը մեր յերկրում:

Պրոլետարիատը Լենինի ղեկավարությամբ և նրա ցույց տված ուղիով ընթանալով հաղթանակեց:

Բայց տիրող դասակարգը, բուրժուազիան, ինչպես մատնանշում էր Լենինն, իր իշխանությունից առանց կտրի չէր հրաժարվում:

Ռուսաստանի կապիտալիստներն ու կալվածատերերը, նրանց հետ նաև վոյշ աշխարհի բուրժուազիան յերեք տարի, 1917 թվից մինչև 1920 թվի դենքի ուժով ուզում էին խորտակել խորհրդային իշխանությունը:

Սորհուրդները չխորտակվեցին, այլ հաղթանակեցին:

Մեր յերկրի բանվոր դասակարգը կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ կարողացավ դյուղի աշխատավոր մասսաներին իր կողմը գրավել, ստեղծել բանվորների և աշխատավորության միություն անպարտ մի ուժ:

Բանվոր դասակարգի հաղթանակը մեր յերկրում ապահովվեց նաև նրանով, Վոր վոյշ աշխարհի պրոլետարիատի համակրությունն իր կողմն էր:

Այսպիսով, 1917-20 թվականների բաց կտվում իրար դեմ պայքարում էին յերկու աշխարհ. մի կողմում կանգնած էր համաշխարհային բուրժուազիան, իսկ նրա դեմ պայքարում էին Ռուսաստանի բանվոր դասակարգն ու աշխատավոր գյուղացիությունը:

Ռուսական բուրժուազիային ոգնելու և իրենց սեփական շահերի պաշտպանության համար խորհրդային դեմ դուրս յեկան կապիտալիստական պետությունները՝ Գերմանիան, Յապոնիան, Անգլիան, Ֆրանսիան, Ամերիկայի Միացյալ Նահանգները, Լեհաստանը, Ռումինիան և ուրիշներ:

Նրանք իրենց տեխնիկայով և «քաղաքակրթությամբ» յերիտասարդ Սորհրդային հանրապետության դեմ կռիվ սկսեցին:

Քաղաքացիական կռիվների մեջ շրջաններ յեղան, յերբ խորհուրդներն ամեն կողմից շրջապատվեցին: Բուրժուազիան որ որի իր հաղթանակին էր սպասում և պատրաստվում էր խրախճանքների:

Սորհուրդները ողակում էին: Հարավից շարժվում էր Դենիկինը Անգլիայի և Ֆրանսիայի ոգնությամբ, Կոչակը ամերիկյան և ճապոնական զորքերի հետ շարժվում էր արևելքից, Հյուսիսից Ամերիկյան և Անգլիան իրեն գործում, Արևմուտքից Յուգոսլիա, Ռումինիան և Լեհաստանն էին կտվում:

Իայց պրոլետարիատը կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, մոբիլիզացիայի յենթարկելով իր ամենագիտակից կարգապահ և հեղափոխության նվիրված գանգվածներին, խտացնելով իր շարքերը, խորտակիչ հարվածներ, հասցրեց ամեն կողմից իր վրա առաջացող թշնամի բանակներին:

Բանվոր դասակարգի, կոմունիստական կուսակցության շարքերից կարմիր հրամանատարներ և ռազմագետներ առաջ յեկան, վորոնց ղեկավարությամբ կարմիր զորքերը Յարիցինի (այժմ Ստալինգրադի) մոտ, Հյուսիսային Կովկասում, Պերեկոպում և այլ վայրերում ռազմական հրաշքներ գոծեցին:

Արևմուտքում բանվոր դասակարգը պայքարում էր «Ճալրենական» բուրժուազիայի դեմ և այդպիսով մեծ ոժանդակություն էր ցույց տալիս մեր հեղափոխությանը:

Բուրժուազիայի ուրախությունն իզուր անցավ: Պրոլետարիատը հաղթանակեց և լայնածավալ յերկրում հաստատեց խորհրդային իշխանությունը:

Ֆրանսիայի, Յապոնիայի, Անգլիայի, Ամերիկայի և մյուս կապիտալիստական յերկրների բուրժուազիան չէր դադարի կտրից, յիթե չվախենար, Վոր իրենց յերկրների բանվորությունն ևս Ռուսաստանի պրոլետարիատի որինակին կարող է հետևել:

Հոկտեմբերյան հեղափոխությունը հուժկու արձագանք գտավ կապիտալիստական համարյա բոլոր յերկրներում:

1918 թվի մարտ ամսում բանվորական հեղափոխություն ծագեց Թիբլանդիայում:

1918 թվի ոգոստոսին այսպես կոչված՝ բրնձի ցույցեր ձապուհիայում:

1918 թվի նոյեմբերին հեղափոխություն ծագեց Գերմանիայում ու Ավստրիայում:

1919 թվի մարտ ամսին պրոլետարական հեղափոխություն վենգրիայում և՝

Կորեիայում բանվորական աղստամբություն ճապոնական կապիտալի դեմ:

1919 թվին ապստամբություն Միրիայում և Արարիայում, Փրանսանգիական կոլոնիզատորների դեմ:

1920 թվի հունվարին բուրժուական ազգային հեղափոխություն ճանկատանում:

1920 թվի սեպտեմբերին բանվորները զրավեցին զործարաններն ու ֆաբրիկաներն իտալիայում:

1921 թվի մարտին առաջավոր բանվորների ապստամբություն Գերմանիայում:

1923 թվի սեպտեմբերի ապստամբություն Բուլղարիայում:

1924 թվի դեկտեմբերին ապստամբություն Նստոնիայում:

1925 թվի ապրիլին ապստամբություն Մարոկկոյում:

1926 թվի հոգոստոսին ապստամբություն Միրիայում:

1925 թվի մայիսին ընդհանուր զործադուլ Անգլիայում:

1926 թվի հուլիսին բանվորների ապստամբություն Վիեննայում (Ավստրիա):

1928 թվին սկսվեց հեղափոխություն Զինաստանում:

1929 թվի մայիսին Բեռլինի պրոլետարիատի մայիսյան կյանքը վերջանում է կապիտալիստների արյունոտ վերժառույթամբ:

1929 թվին հեղափոխական խոր խմորում Իսպանիայում:

1931 թվին հեղափոխություն Իսպանիայում:

1932 թվին զործադուլ Բելգիայում և այլն և այլն:

Հեղափոխությունների և հեղափոխական շարժումների այս ժամանակագրական համառոտ ցանկը ցույց է տալիս, վոր հեղափոխական ալիքը տարածվել է կապիտալիզմի համարյա բոլոր յերկրներում:

Յերբ կապիտալիստները բաց կռվում պարտվեցին, այն ժամանակ նրանք տնտեսական պայքար սկսեցին խորհուրդների դեմ:

Բանվոր դասակարգը բաց կռվում ջարդ ու փշուր անելով կապիտալիստական ռազմական ուժը, իր վողջ ենեղդիան նվիրեց տնտեսական շինարարությանը: Այս ճակատի վոջ պակաս խոշոր դժվարությունները ևս պետք էր հաղթահարել:

Ո՞վ չի հիշում այն դժվարությունները, վորոնք առաջ յեկան 1921 թվի անբերքության հետևանքով:

Կապիտալիստները ատամ եյին սրում խորհրդների դեմ և ասում, թե «մենք կռվում պարտվեցինք բայց սովի ճիրաններում բողբոջները սովածան կլինեն»:

Պատմությունը ցույց տվեց, վոր չկան այնպիսի դժվարություններ, վորոնց չհաղթահարի բանվոր դասակարգը:

1921 թվի հոկտեմբերին Լենինը խոսելով բանվոր դասակարգի առաջ կանգնած խնդիրների մասին, ասում եր՝ «Վերջին և ամենազվախափոր, ամենադժվար և մեր ամենաանկատար զործը տնտեսական

շինարարությունն է ու քայքայված ֆեոդալական և կիսաքանդ կապիտալիստական տնտեսության փոխարեն նոր, սոցիալիստական շենքի տնտեսական հիմքի կառուցումն է: Այս ամենակարեւոր և ամենադժվար զործում մենք ամենից շատ անհաջողություններ և սխալներ ենք ունեցել: Յեւ հիրավի, մի՞թե այսպիսի համաշխարհային նոր զործում կարելի յե առանց անհաջողությունների և առանց սխալների մնալ»:

Մի այլ տեղում Լենինը ասում է՝ «Ինչ էլ մեղ չարժենա, ինչքան ել ծանր լինեն անցողական շրջանի զրկանքները, սոյն ու քայքայումը, մենք հողեպես չենք ընկճվի և մեր զործը կհասցնենք իր հաղթական վախճանին»:

Այս խոսքերը Լենինը ասել է 1921 թվին: Կգտնվե՞ն արդյոք մարդիկ, վորոնք կասկածանքի յենթարկեն մեր խոշորագույն նվաճումները:

Լենինը բանվոր դասակարգի առաջ դրած գլխավոր խնդրի մասին ասել է. «սոցիալիստական հասարակություն ստեղծելու իրական ու միակ հիմքը միայն և միայն ծանր ինդուստրիան է»:

Լենինը այսպիս եր դնում սոցիալիզմի կառուցման խնդիրը: Բանվոր դասավարդը այս խնդիրն սկսեց իրագործել հինց այն որից, յերբ դուրս յեկավ իմպերիալիստական պատերազմից, քաղաքացիական կոիւնեյից և 1921 թվի սովից առաջացած քայքայումից:

Յերբ հետադարձ հայացք ենք գցում դեպի մեր անցած 15 տարվա ուղին, շատ դժվար է լինում իր ամբողջ մեծությամբ պատկերացնել կործ ժամանակվա մեջ կատարած մեր մեծ զործը:

Չպետք է մոռանալ, վոր պրոլետարիատի դիկտատուրան հաստատվել է կապիտալիստական պետություններից ամենահետամնաց յերկրում, ուր հսկա տարածության վրա պահպանվել եյին մանր գյուղական տնտեսություններ, ուր իշխում եյին ցարական իշխանությունից մնացած անգրագիտություն, կիսավայրենիություն, անկուլտուրականություն և այլ «բարիքներ»:

Չպետք է մոռանալ և այն, վոր պրոլետարական դիկտատուրան 72 որ կյանք ունեցած Փարիզյան կոմունայից հետո առաջին անգամն է հաստատվել և պրոլետարիատը իր ամբողջ ուղին նոր է կառուցել:

ԽՍՀՄ-ի պրոլետարիատը հաղթանակ հաղթանակի հետեից և տարել:

Կապիտալիստների և նրանց զործակատար Ձ-րդ ինտերնացիոնալի սոցիալ-ֆաշիստական կուսակցությունների հույսերը՝ կապված ռազմական բլուկադի 1921 թվի սովի հետ և տնտեսական քայքայման հետ՝ չարդարացան:

Նրանք իրենց հույսը դրին բանվորների և աշխատավոր գյուղացիության կապի թուլացման վրա:

Բայց այստեղ ել նրանց հույսերը չարդարացան: Կոմունիստական կուսակցությունը Լենինի գլխավորությամբ ամրապնդում և այդ կապը նոր տնտեսական քաղաքականության հիման վրա և լուծում և այդ խնդիրը:

Մեր թշնամիները հույսը դրին գյուղի կապիտալիստական տարրերի-կուլակների վրա:

Բանվոր գաղակարգը իր կուսակցության և ընկ. Ստալինի դեկավարությամբ, Լենինի ցուցմունքների համաձայն իր առաջ խնդիր և գրել վողջ գյուղատնտեսությունը կառուցել սոցիալիստական հիմունքների վրա: Այս հարցում ևս բոլշևիզմը հաղթանակում է:

ԽՍՀՄ-ի աշխատավոր մասսաները գործնականում համողմեցին, վոր բոլշևիկների ուղին միակ ճշմարիտ ուղին և և ել ավելի համախմբվեցին կոմունիստական կուսակցության շուրջը: Համաշխարհային պրոլետարիատի համակրությունը մեր կողմն և և դնալով խորանում է:

Հոկտեմբերյան հեղափոխությամբ աշխարհը բաժանվեց յեղկու տարբեր սիստեմների-կապիտալիստական սիստեմի և սոցիալիստականի, վորոնց մեջ կատարել պայքար և ընթանում:

Վորոնք են այդ պայքարի արդյունքները:

Այս հարցին ընկ. Ստալինը 16 համագումարում հետևյալ պատասխանն և տալիս.—

«Մեզ մոտ, ԽՍՀՄ-ում արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ անող վերելք կա: Այնտեղ, կապիտալիստների մոտ արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ անող նգնաժամ է»:

Այս բնորոշումն ընկ. Ստալինը արել և 1930 թվի հունիս ամսին: Փոխվել և դրությունը արդյոք. վոչ:

Կյանքը ցույց տվեց, վոր համաշխարհային տնտեսության այս վերլուծումն ու յեղրակացությունը միակ ուղիղ մարքսիստական-լենինյան վերլուծումն է:

Կապիտալիզմի ներկա համաշխարհային ճգնաժամի սկզբից, 1929 թ. բուրժուական եկոնոմիստները, 2 ինտերնացիոնալի կեղծ մարքսիստները և դրանց հետ միասին ամեն տեսակի ոպորտունիստները ապում էին, թե այս ճգնաժամը ժամանակավոր է: շուտով կանցնի և կապիտալիզմի համար դարձյալ լավ որեր կբացվեն: Այլ բան ցույց տվեց կյանքը: Ծգնաժամը կապիտալիստական յերկրներում խորացավ և շարունակում և խորանալ:

Կապիտալիստական առաջավոր յերկրում՝ Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում այժմ 10 միլիոն գործազուրկ կա:

Իրար հետևից փակվում են այնպիսի ձեռնարկություններ, վորոնք կապիտալիստական աշխարհի պարծանքն են հանդիսանում: Որինակ կարող են ծառայել Ֆորդի տվտոյի գործարանները, ուր 120 հազար բանվորի փոխարեն աշխատում են 15 հազարը միայն: Ֆորդի ձեռնարկությունների արտադրական հնարավորությունների միայն 6 տոկոսն և ոգտագործվում: Ֆորդը արձակում և տիխնիկներին, ինժեներներին, բանվորներին, վորոնք 30 տարի աշխատել են իր մոտ:

Մեծ գործազրկություն և նաև մտավորականների մեջ: Բարձրագույն դպրոցներ ավարտած տասնյակ հազար մասնագետներ գործազուրկ են մնում և ապրելու համար ստիպված են սեագործ աշխատանքի տեղ վորոնել: Մեզանում գործազրկությունը վերացված է:

ԽՍՀՄ-ում ուսանողների թիվը ԲՈՒՀ-երում և ԲՏՈՒՀ-ներում, համեմատած 1928թվի հետ, այժմ 4 անգամ ավելի յե:

Այն ժամանակ, յերբ կապիտալիստական յերկրներում փակվում են դպրոցներն և ուսուցիչները գործազուրկ են մնում, մեզ մոտ 78000 հազար աշակերտների փոխարեն 1914 թվին, տարրական և միջնակարգ դպրոցներում սովորում են այժմ շուրջ 25 միլիոն աշակերտներ: Խորհրդների յերկրում իրագործվում և 7 ամյա պարտադիր ուսումը և յերկրորդ հնգամյակում խնդիր և դրվում իրագործել ընդհանուր տասնամյա պոլիտեխնիկական ուսուցումը:

XV կուսհամագումարը խնդիր դրեց արևելքում ստեղծել յերկրորդ մետալուրգիական բազան, Ուրալ-Կուզբասը: Բանվոր դասակարգը կարճ ժամանակամիջոցում և հաղթական կերպով այս խնդիրն ել և լուծում:

XVI կուս. համագումարից անցել և ընդամենը 2 տարի և 4 ամիս և ԽՍՀՄ-ում գործարկման մեջ են մտել 12 նոր դոմաններ, վորից 9-ը 1932 թվից:

ԽՍՀՄ-ում այսոր 100 դոմաններ չուղուն են տալիս: Կառուցվում ու վերակառուցվում են նոր ու նոր դոմաններ ու գործարկման մեջ դրվում: Կապիտալիստական աշխարհում ընդհակառակը, իրար հետևից մարում են դոմանները:

ՀԱՄՆ-ում	400	դոմանից գործում են	70
Անգլիայում	307		69
Գերմանիայում	155		47

Մարում են կապիտալիստների դոմանները, մարում և ինքը կապիտալիզմը:

ԽՍՀՄ-ում առաջին հնգամյակը կատարվում ու գերակատարվում և 4 օտում:

Արդյունաբերության առանձին ճյուղեր և գործարաններ հնգամյա պլանը իրագործել են 2¹/₂—3 տարում:

Առաջին հնգամյակի (ոպտիմալ վարիանտի) գերակատարումը դեռևս 1931 թվին պարզ չերեվում եր հետեվյալ թվերից.

Քարածուխ	105,7	տոկոս
Նավթ և գազ	137,5	»
Տորֆ	106,7	»
Աղբեստ	764,5	»
Շոգեկառքերի կառուցում	123,0	»
Գունավոր մետաղագործություն	132,	»
Մեքենաշինություն	196,2	»
Գյուղատնտեսական մեքենաշինութ.	131,2	»
Փայտ և փայտամշակում	186,5	»
Կոշիկ	128,0	»
Կրկնակոշիկ	105,7	»
Աղ	107,8	»
Ժողովրդական յեկամուտ	104,4	»

Առաջին հնգամյակում գործարկման մեջ են դրված այնպիսի խոշոր ձեռնարկություններ, ինչպիսին են Ռոստ-Սելմաշը, Ստալին-գրադի և Նարկովի տրակտորի գործարանը, Մոլոտովի անվան ավտո-յի գործարանը Գորկիում (Ն. Նովոգորոդ), Ստալինի անվան ավտոյի գործարանը, Շարիկովոդշիպնիկի գործարանը Մոսկվայում, կրեդինգ գործարանը Գրոդնիոյում և այլն և այլն: Ինչպես հայտնի չե, 1931 թվին գործարկման են անցել 518 նոր գործարաններ և 1040 մեքենա-տրակտորային կայաններ:

Յերբ առաջին հնգամյա պլանը հրապարակվեց, մեր թշնամիները ծաղրեցին այն:

Բայց պրոլետարիատը անխոնջ ջանքերով հնգամյա պլանը իրա-գործում և չորս տարում:

Բուրժուազիայի ծաղրին պրոլետարիատը պատասխանեց սոցիա-լիստական շինարարության այնպիսի տեմպերով, վոր նույնիսկ մեր թշնամիներն են զարմանում:

Սկզբում աջ ոպորտունիստներն ևս առաջին հնգամյակին դեմ դուրս չեկան և առաջարկեցին յերկամյա պլան: Կուսակցությունը հենվելով բանվոր դասակարգի հսկա ակտիվության վրա, աջերին ու-ժեղ հարված հասցրեց և ստիպեց աջ թեքման ղեկավարներին ընդու-նել իրենց սխալները:

Սոցիալիստական շինարարության մեջ կուսակցությունը իրա-գործում և իր գլխավոր լենինյան գիծը, վորը տարվում և բու-շեվիկյան Կենտկոմի ղեկավարությամբ և ընկ. Ստալինի գլխավորու-թյամբ:

Սոցիալիստական շինարարության գլուխ գործոցներից մեկը Դնեպրոդեսն և հանդիսանում, վորը աշխարհիս ամենախոշոր ջրակնկտրոկայանն է: Դնեպրոդեսի կառուցումն ու գործար-կումը (10 հոկտեմբերի 1932 թ.) ցույց և տալիս, վոր «չկան այն-պիսի ամբողջներ, վորոնց բոլշեվիկները չկարողանան տիրապետել»:

Սոցիալիստական արդյունաբերության ղեկավարների 1-ին կոն-ֆերանսում ընկ. Ստալինը հիշեցրեց «կամ մահ, կամ մենք պետք և հաւենք և անցնենք առաջավոր կապիտալիստական յերկրներին» Լենինի խոսքերը և ինքն ել ավելացրեց, «մենք առաջավոր յերկրնե-րից 50—100 տարով հետ ենք մնացել. մենք այդ տարածությունը պետք 5—10 տարվա ընթացքում անցնենք: Կամ մենք կանենք դա, կամ մեզ կտրորեն»:

Դնեպրոդեսը ցույց և տալիս վոր բոլշեվիկները իրագործում են իրենց ղեկավարի լոզունգը:

Կուսակցության առաջ կանգնած ամենադժվար հարցը գյուղատնտեսության հարցն էր: 1929 թ. դեկտեմբերի 27-ին ագ-րարնիկ մարքսիստների կոնֆերանսում ընկ. Ստալինն ապացուցեց, վոր խորհրդային իշխանությունն ու սոցիալիստական շինարարու-թյունը այլևս չեն կարող յերկու իրարից ջարբեք հիմունքների վրա մնալ, խոշոր, կենտրոնացած սոցիալիստական արդյունաբերությունն ու մանր, կտոր-կտոր, սակավ ապրանքային գյուղատնտեսությունը միասնականություն ստեղծել, զարգանալ չեն կարող: Ընկ. Ստա-լինը ապացուցեց, վոր միակ ուղիղ ճանապարհը դա գյուղատնտե-լության վերակառուցումն է. «Սոցիալիստական ուղին կայա-նում և գյուղատնտեսության մեջ կոլտնտեսություններ և խորհտն-տեսություններ ստեղծելու, մանր գյուղացիական տնտեսություն-ները կոլեկտիվացնելու, նրանց տեխնիկայով և դիտություններով և գյուղատնտեսության միջից կապիտալիստական տարրերը վտա-րելու մեջ»:

Մեր թշնամիները հույս ունեյին, թե մեր գյուղատնտեսությունը կապիտալիստական ուղիով կընթանա—կուլակային տնտեսություն-ները կզարգանան, վորոնց վրա հենվելով, կկտրողանան խորհրդային իշխանությունը տապալել:

Բանվոր դասակարգն ու աշխատավոր գյուղացիությունը կոմու-նիստական կուսակցության և ընկ. Ստալինի ղեկավարությամբ ըն-թացան գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման ու-ղիով:

1928 թվին կոլտնտեսությունները ընդգրկել էին գյուղական տնտեսությունների 2.3 տոկոսը միայն:

1928 թվին	8 տոկոս
1930 »	22 »
1931 »	60 »
1932 »	62 »

Հացահատիկային ռաշոնները — Հյուսիսային Կովկասը, միջին և արևելյան Մերձկովկասյան շրջանները և այլ շրջաններ հիմնականում ավարտել են կոլեկտիվացումը և դրա հիման վրա կուլակությունը վերացրել են։

Այս նվաճումներն ապացուցում են, վրա լինելու «ով-ում» հարցը վերջնականապես լուծվել և սոցիալիզմի ոգտին։

Լիկվիդացիայի յեն յենթարկվում կապիտալիստական մնացորդները՝ կուլակությունը։

Հենվելով քաղաքում և գյուղում ունեցած մեր հաջողությունների վրա, 17-րդ կուլակոնֆերանսը հրահանգեց կազմել յերկրորդ հրահանգյալի պլանը, անդասակարգ հասարակություն ստեղծելու, բոլոր աշխատավորներին սոցիալիզմի գիտակից և ակտիվ կառուցողներ դարձնելու պլանը։

Կապիտալիզմը դեպի անդունդն և դորմում, սոցիալիզմը բարձրանում և դեպի վեր։

«Բավական և ասել, վրա յերեք խոշոր ինդուստրիայի յերկրներում՝ Գերմանիայում, Անգլիայում, ՀԱՄ Նահանգներում գործադուրկների թիվը 25 միլիոնի յե հասնում, չհաշված վոչ լրիվ բանվորական ուրով բանդներին»։*)

Կապիտալիզմի ճգնաժամը որ-որի յտրանում և, սոցիալիզմը նոր ու նոր հաղթանակներ և ձեռք բերում։

Կապիտալիզմը ճգնաժամից դուրս գալու յիլքը փնտրում և յապերիտալիստական պատերազմների և ԽՍՀՄ-ի դեմ նոր արշավանք կազմակերպելու մեջ։ Իմպերիալիստական նոր պատերազմի սկիզբը դրել և ձապոնիան՝ Մանջուրիայի գրավումով։ Այս գործում ձապոնիան, ոգնություն և ստանում Անգլիայի և Ֆրանսիայի կողմից։ Մրանով ռազմաբեմ և պատրաստվում Խորհրդային Միության դեմ հարձակվելու համար։

ՀԱՄ Նահանգները Ձինաստանում նոր շուկաներ ձեռք բերելու համար պատերազմի յեն պատրաստվում ձապոնիայի դեմ։ Մրվում են Անգլիայի և Ամերիկայի, Գերմանիայի և Ֆրանսիայի, Ֆրանսիայի և Իտալիայի, Լեհաստանի և Գերմանիայի և այլ պետությունների հակասությունները։ Նրանք բոլորը միասին հարձակում են պատրաստում Խորհրդային Միության դեմ։

*) Большевик № 16

Կոմիտեները և ՀԿ(Բ)Կ աշխատավորական մասսաներին մոբիլիզացիայի յեն յենթարկում ճգնաժամից դուրս գալու կապիտալիստական յելքի դեմ և ճգնաժամից դուրս գալու պրոլետարական յելք — պրոլետարական հեղափոխություն և կապիտալիստական սիստեմի կործանումն են պատրաստում։

Խորհրդային Միությունը առաջին հնգամյակը հաղթականորեն 4 տարում իրագործելով, ամրապնդում և յերկրի պաշտպանությունը։ Հնգամյակի նվաճումներով այդ պաշտպանողական կարողությունը ամրացնելով հանդերձ, հա տանում և յաղաղության քաղաքականություն և պատրաստ և այդ քաղաքականությունը շարունակել վոչ միայն դիվանագիտության միջոցով։

Սոցիալիստական շինարարության յտշոր նվաճումները մեր կուսակցությունը ձեռք և բերել անհաշտ պայքար մղելով կուսակցության գլխավոր գծից լիքվողների դեմ, ուժեղ պայքար և մղել ու շարունակում և մղել այդ պայքարը հակահեղափոխական տրոցկիզմի, գլխավոր մտանդ ներկայացնող աջ և ձախ թեքումների դեմ։

Հոկտեմբերյան հեղափոխության 15 ամյակը կատարելով, Լենինի, Կոմիտեների շրոշի տակ կոմունիստական կուսակցությունը ընկ Ստալինի առաջնորդությամբ բանվոր դասակարգին և աշխատավորությանը տանում և դեպի համաշխարհային պրոլետարական հեղափոխություն։

Թարգմ. փափախ. փրություն

ՀԱՂԹԱՆԱԿՈՂ ՍՈՑԻԱԼԻԶՄԸ

«Լենինի դրոշակով մենք հաղթանակեցինք Հոկտեմբերյան հեղափոխության համար մղած կռիվներում: Լենինի դրոշակով մենք վճռական հաջողություններ ձեռք բերինք սոցիալիստական շինարարության հաղթանակի համար մղած պայքարում: Այդ նույն դրոշակով կհաղթենք ամբողջ աշխարհում պրոլետարական հեղափոխության հաղթանակի համար»:

Ի. ՍՏԱՆԻՆ

Հոկտեմբերյան հեղափոխության շնորհիվ տապալվեց կալվածատերերի ու կապիտալիստների իշխանությունը, վերացվեց նրանց մասնավոր սեփականությունն արտադրության միջոցների վրա:

Հսկայական են մեր յերկրի սոցիալիստական ինդուստրիայի հաջողությունները: Հիմնական հացահատիկային ուսյուններում համատարած կոլեկտիվացման հիմունքով կուլակությունն արդեն հիմնականում վերացված է վորպես դասակարգ, վերացված է նրա մասնավոր սեփականությունն արտադրության միջոցների վրա:

1932—33 թվականին մենք ավարտում ենք համատարած կոլեկտիվացումը և կուլակության վերացումն իբրև դասակարգի: Այդպիսով վերացնում ենք մեր յերկրում շահագործման վերջին աղբյուրները:

Հանրահայտնի յե, վոր բուլեիկները կուլակությունը գործնականորեն լուծեց Հոկտեմբերյան հեղափոխության ամենադժվար խնդիրը, վորը համաշխարհային պատմական նշանակություն ունի, — ինդուստրացման հիմունքով դեպի կոլեկտիվ տնտեսություն դարձան դյուղի չքավոր-միջակ տնտեսությունները: 1932 թվականի սկզբում կոլտնտեսությունների մեջ են 62 տոկոս գյուղական չքավոր-միջակ տնտեսություններ, այժմ նրանց ավելի քան $\frac{2}{3}$ -ը կոլտնտեսություններում է գտնվում,

Մենք այս բոլոր հաջողությունները ձեռք բերինք շնորհիվ կոմկուլակության ճիշտ քաղաքականության, շնորհիվ կոմկուլակ-

ցության և ամբողջ աշխարհի պրոլետարիատի առաջնորդի, Կենտկոմի ճիշտ ղեկավարություն:

Առաջին հնգամյակի հաջողությունները նոր եջ բացեցին մարդկային պատմության, մեր յերկրի պատմության մեջ:

Կուլակության 17-րդ կոնֆերանսի վորոշումները պատմական մեծ նշանակություն ունեն վոչ միայն մեր յերկրի, այլ և ամբողջ աշխարհի պրոլետարիատի համար, ինչպես սոցիալիզմի համար մղվող պայքար, ինչպես կոմունիզմի — բուլեիկների վերջնական նպատակի համար մղվող պայքար:

17-րդ կուլակոնֆերանսում կուլակությունը հիմնական դիրեկտիվներ տվեց յերկրորդ հնգամյակի, անդասակարգ հասարակություն կառուցելու մասին:


Յեթի առաջին հնգամյակում (վորն ավարտվում է այս տարի, չորս տարվա ընթացքում) մենք կառուցեցինք սոցիալիստական հասարակության հիմքը, ապա յերկրորդ հնգամյակում (1933—37 թ.) այդ հիմքի վրա կկառուցենք սոցիալիզմը-կոմունիզմին նախորդող շրջանը:

Լենինն ասում եր, վոր «սոցիալիզմը դասակարգերի վոչնչացումն է» և ՅՍՀՄ-ը կոմկուլակություն ղեկավարությամբ վստահորեն և վճռականապես գնում է դեպի սոցիալիզմ: Արդեն հենց այժմ նա այս ուղղությամբ հսկայական հաջողություններ ունի:

Ահա թե 17-րդ կուլակոնֆերանսը ինչ խնդիր է առաջադրում 2-րդ հնգամյակի համար. — «Յերկրորդ հնգամյակի հիմնական քաղաքական խնդիրն է՝ վերջնականապես վերացնել կապիտալիստական տարրերը և ընդհանրապես դասակարգերը, լիովին վոչնչացնել դասակարգային տարբերությունը և շահագործում առաջացնող պատճառները, հաղթահարել կապիտալիզմի մնացորդները եկոնոմիկայի և մարդկանց գիտակցության մեջ, յերկրի ամբողջ աշխատավոր բնակչությունը վերածել անդասակարգ սոցիալիստական հասարակության գիտակից և ակտիվ շինարարների» (17-րդ կուլակոնֆերանսի բանաձևվից)

Յերկրորդ հնգամյակի համար առաջադրված խնդիրը հեշտ խընդիր չե: Նա կարող է իրագործվել միայն լրաված աշխատանքով, պրոլետարիատի դասակարգային լրաված պայքարով, այն բոլոր խոչնդոտները հաղթահարելով, վորոնք կապված են կապիտալիզմի մնացորդների հետ:

Յերկրորդ հնգամյակում «գեւ ևս անխուսափելի յե դասակարգային պայքարի սրումը առանձին մոմենտներում, մանավանդ առանձին ուսյուններում և սոցիալիստական շինարարության առանձին ճակատամասերում, վոր դրա հետ միասին ընդգծում է, թե անխուսափելիորեն պիտի պահպանվեն, իսկ մի քանի դեպքերում նաև պիտի



ուժեղանան բուրժուական ազդեցութիւններն աշխատավորների առանձին խավերի ու խմբակների վրա, դեռ եւս յերկար ժամանակ պրոլետարիատին խորթ դասակարգային ազդեցութիւնները անխուսափելիորեն պիտի թափանցեն բանվորների միջավայրը և նույնիսկ կուսակցութեան մեջ: (17-րդ կուսկոնֆերանսի վորոշումներէն):

Այս վորոշումը պահանջում է մեղանից 2-րդ հնգամյակում չթուլացնել դասակարգային պայքարը, այլ ավելի ուժեղացնել այդ պայքարն ընդդէմ պրոլետարիատին խորթ տարրերի, ընդդէմ ոտար ազդեցութիւններին, վորոնք կարող են լինել բանվոր դասակարգի միջավայրում:

Այդ ազդեցութիւնների դեմ պայքարելու համար մենք պետք է բարձրացնենք բանվորների ակտիվութիւնը, բարձրացնենք նրանց կուլտուրական մակարդակը: «Միլիոնների և տասնյակ միլիոնների սովորութեան ուժը — ամենասարգաւելի ուժն է» — ասում էր Լենինը: Այդ ուժի դեմ, վորը յերկար տարիների ընթացքում հավաքվել է մարդկանց դուրսն ելում, — մենք պետք է ավելի ևս ուժեղացնենք դասակարգային պայքարը, ավելի վճռականորեն ջախջախենք կապիտալիստական մնացորդները, այդ պայքարին ներգրավելով բազմամիլիոն աշխատավորներին, կազմակերպելով աշխատանքը, պայքարելով «կուլտեսականի» — յերեկվա մանր սեփականատիրոջ վերափոխման համար: Սա գլխավոր պայքարն է դասակարգերի վոչնչացման ճանապարհին:

Կուսակցութիւնը կապիտալիստների մնացորդների դեմ դեռ ևս մղելիք էր պայքարում պետք է կատարել ու գերակատարել 2-րդ հնգամյակի ամբողջ պլանը, պետք է զորահավաքել մասսաներին և բոլոր հնարավորութիւնները, վորպեսզի բոլոր աշխատավորներին դարձնեն սոցիալիստական անդամակարգ հասարակութեան գիտակից և ակտիվ կառուցողներ:

Շնորհիվ այն հանգամանքի, վոր ժողովրդական տնտեսութեան սոցիալիստական սիստեմը հսկայական առավելութիւններ ունի, շնորհիվ այն հաջողութիւնների, վոր մենք ձեռք ենք բերել մինչև հիմա, 1932 թվականին, — յերկրորդ հնգամյակում ավելի և ավելի զարկ կտանք խորհրդային Միութեան արտադրական ուժերի աճման:

2-րդ հնգամյակի հենց առաջին տարիներում հիմնականում կավարտվեն 1930—31 թվականին սկսված և աշխարհում ամենամեծ կոմբինատները — Ուրալո-Կուզնեցկը, Բերեզնիկովոն, Դնեպրո-Կոմբինատը, Դոնբասի վերակառուցումը և այլն: 1932—33 թվականին հիմնականում կավարտվի համատարած կոլեկտիվացումը:

Սակայն այս դեռ բոլորը չէ, այս դեռ 2-րդ հնգամյակի մի փոքր մասն է միայն: Յեթե 1-ին հնգամյակի առաջին տարիներում մենք մեքենաներ ելինք բերում արտասահմանից, մեր արդյունաբե-

րութեան վերակառուցման համար, ապա 1932 թվականին մենք մեր յերկրում արդեն պատրաստում ենք մեր բաղանձ ժողովրդական տնտեսութեան տեխնիկական վերակառուցումն ավարտելու համար, մեր սոցիալիստական բաղանձ ինդուստրացման, սև մետաղագործութեան, քարածխի արդյունաբերութեան, նավթարդյունաբերութեան մեծ ու բարդ մեքենաներ կառուցելու համար: Մենք կունենանք մեր բաղանձ յերկրի ելեկտրավորման համար, դյուղատնտեսութեանը կըտանք նոր մեքենաներ, արագ թափերով կղարդացնենք թիթեւարդյունաբերութիւնը: Կկառուցվեն նոր գործարտաներ՝ սարքոցներ պատրաստելու համար, ինչպես և շոգեշարժիչներ, վագոններ և այլն պատրաստելու գործարաններ:

2-րդ հնգամյակում մեր ունեցած սարքոցների թիվը կավելանա 400 հազար նոր սարքոցներով: 1937 թվականին ԽՍՀՄ-նը մեքենաշինարարութեան մեջ առաջին կամ յերկրորդ տեղը կբռնի ամբողջ աշխարհում:

Մեքենաշինարարութեան զարգացումը կապված է նաև եներգետիկական խոշոր բաղայի ստեղծման հետ: 1937 թվականին ԽՍՀՄ ելեկտրովորումից կստացվի վոչ պակաս, քան 100 միլիարդ կիլովատ-ժամ (1932 թվ. — 17 միլիարդ): Սրանով մենք 1937 թվականին կանցնենք Գերմանիայից, Կանադայից, Անգլիայից և համարյա թե կհասնենք Հոլսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներին:

1937 թվականը, — յերկրորդ հնգամյակի վերջին տարին մեզ պետք է տա 250 միլ. տոնն ածուխ (1932 թ. — 90 միլ.): Սրանով ԽՍՀՄ կհասնի Անգլիային, կանցնի Յեկրոպայի բոլոր մյուս պետութիւններից: Միայն ՀԱՄՆ-ը դեռ առաջին տեղը կբռնեն: 2-րդ հնգամյակում նավթի հանուրդը պիտի կազմի վոչ պակաս քան 80—90 միլ. տոնն, այսինքն 2¹/₂ անգամ ավելի, քան 1922 թվ.:

Սեւ մետաղների արդյունաբերութեան արտադրանքը 1937 թվին պիտի ավելանա վոչ պակաս քան 22 միլիոն տոնն թուջով (1932 թ. — 9 միլիոն տոնն): Այս թվերը ցույց են տալիս, վոր բացի այն կոմբինատներից, վորոնց կառուցումը կվերջանա 2-րդ հնգամյակի առաջին տարիներում, դարձյալ կկառուցվեն հսկայական կոմբինատներ, որինակ, Խալիլովյան (Միջին Վոլգա), Կամարովո-Չիգանի (Բաշկիրիա) Չերեմխովի (արեւելյան Սիբիր), Դաշքենգի (Անգրկովկաս), Սուչանի (Հեռավոր Արեւելք) և այլ կոմբինատները: Սա ցույց է տալիս, վոր յերկրորդ հնգամյակի վերջում մենք կանցնենք Յեկրոպայի բոլոր յերկրներից և մի քիչ հետ կանանք ՀԱՄՆ-ից:

Դուճավոր մետաղների ու ֆիւիակաճ արդյունաբերութեան արտադրանքը 1937 թվին պետք է բարձրանա այնպիսի մակարդակի. վոր-

պետքի անհրաժեշտ քանակությամբ հումուլթ մատակարարվի վերջինիս կարիքն զգացող գործադաններին և ֆաբրիկներին:

2-րդ հնգամյակում մեծ նշանակություն է ունենալու տրանսպորտի զարգացումը: Գաղտնիք չէ, թե ինչպիսին եր մեր տրանսպորտը առաջին հնգամյակում: Կուսակցությունը խնդիր է առաջադրել յերկրորդ հնգամյակում ավելացնել յերկաթուղային ցանցը 25—30 հազար կիլոմետրով: Պիտի վերակառուցվեն այն յերկաթուղիները, վորոնք կառուցվել են 1931 թվին: Յերկաթուղիները մեխանիզացիայի և ելեկտրավորման կյենթարկվեն: Բացի այդ, կմեքենայացվի և կավելացվի ջրային տրանսպորտը, կկառուցվեն նոր խճուղիներ, կզարգանա ագրո-տրանսպորտը: 2-րդ հնգամյակի վերջում մենք կունենանք բազմաթիվ նոր, զորեղ շոգեատարներ, ավտոմոբիլներ, ճանապարհորդական սավառակներ և այլն:

1-ին հնգամյակում ծանր արդյունաբերության խոշորագույն հաջողությունները մեզ հնարավորություն կտան 2-րդ հնգամյակում մեծ թափով զարգացնել թեթև և սննդի արդյունաբերությունը: Թեթև թավ արդյունաբերության զարգացման զուգընթաց՝ կզարգանա նաև գյուղատնտեսությունը և կհասնի այնպիսի մակարդակի, վոր աշխատավորների նյութական բարեկեցությունը, համեմատած 1932 թվականի հետ, բարելավվի յերկու—յերեք անգամ:

ԽՍՀՄ հանդիսանում է այն միակ յերկիրը, վորը պայքարում է աշխատավորների կյանքի բարելավման համար և միայն նա հնարավորություն ունի այդ անելու. մինչդեռ կապիտալիստական յերկրներում, կապիտալիստական տնտեսավարման պայմաններում աշխատավորների դրությունն օրեցօր վատթարանում, այնտեղ տասնյակ միլիոն աշխատավորներ դատապարտված են սովի, չունեն վոչ աշխատանք և վոչ բնակարան:

Ինդուստրացման հիմունքով, այն հաջողությունների հիմունքով, վոր մենք արդեն ունենք, 2 րդ հնգամյակում մենք մի մեծ քայլ դեպի առաջ կանենք գյուղատնտեսության զարգացման բնագավառում: Բացի այն, վոր 1932—33 թվ. ավարտում ենք համատարած կոլեկտիվացումը, 2-րդ հնգամյակում խնդիր է դրվում բերքը բարձրացնել 40 տոկոսով, ցանքերի տարածությունը պիտի ավելանա 160—170 մ. հկ և գյուղատնտեսական արտադրանքը—վոչ պակաս քան 1300 միլիոն ցենտներ հացահատիկով: Բամբակի ու շաքարի ճակնդեղի բերքը կբարձրանա 3 անգամ և հիմնականում կլուծվի անասնաբուծության խնդիրը:

Յերկրորդ հնգամյակի վերջին տարում մեր ինդուստրիան պիտի տա 170 հազար տրակտոր և այլ գյուղատնտեսական մեքենաներ:

2 րդ հնգամյակը, նրա կատարումը պետք է հիմնականում հանգե բանվորի և գյուղացի-կոլտնտեսականի միջև յեղած տարբերությունների վերացման, պետք է մեզ տա բոլոր վճռական հնարավորությունները՝ քաղաքի և գյուղի միջև յեղած տարբերությունը վերացնելու համար:

Այս բոլորը ակնհայտաբար ցույց է տալիս վոչ միայն մեզ, այլ և ամբողջ աշխարհին, վոր գյուղատնտեսությունը զարգացումը հենարավոր է միայն տնտեսության սոցիալիստական սիստեմի շնորհիվ, վոր ինդուստրացման և գիտության հիմունքով կարելի յե զարգացնել գյուղատնտեսությունը բոլշևիկյան թափերով:

Դասակարգերի վոչնչացումը, մարդու վերափոխումը և ժողովրդական տնտեսության աճումը 2-րդ հնգամյակում չեն կարող տեղի ունենալ ինքնահոսով, փքուն ֆրադներով և ձեռքերը ծալած՝ հաջողությունների սպասելով, այլ «միայն գյուղում կապիտալիզմի մնացորդների դեմ խստորեն պայքարելով, միայն կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրապնդման համար պայքարելով, յերեկվա մանր սեպականատերերին և այսորվա ու վաղվա կոլտնտեսականներին դարձնելով սոցիալիզմի գիտակից և ակտիվ շինարարներ» (Մոլոտով):

Մենք չենք կարող յերկրորդ հնգամյակում մի կողմ թողնել նաև կոլտնտեսությունների կազմակերպչական տնտեսական ամրապնդման խնդիրը, չենք կարող խոսել 2-րդ հնգամյակի թափերի մասին, յեթե այժմ չպայքարենք կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրապնդման համար: Գաղտնիք չէ, վոր դեռ ևս շատ կոլտնտեսություններում գոյություն ունի դիմադրկությունը, հավասարանքը, վոր աշխատանքի կազմակերպումը դեռ ևս շատ ու շատ ցածր մակարդակի վրա յե գտնվում: Մենք պետք է պայքարենք կոլտնտեսություններում աշխատանքի կազմակերպման ուժեղացման ու ամրապնդման համար, աճեցնենք ու դաստիարակենք կոլտնտեսային նոր կադրերին, կոլտնտեսականներին—յերեկվա անհատականներին դարձնենք սոցիալիստական անդառակարդ հասարակության գիտակից և ակտիվ կառուցողներ: 2-րդ հնգամյակում մեր ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում պիտի ներդրվի մոտավորապես 140—150 միլիարդ ուրբլի:

Յերկրորդ հնգամյակի պլանները կատարելու համար մենք ունենք բոլոր հնարավորությունները, այն բոլորը, ինչ վոր անհրաժեշտ է, բոլոր տնտեսական բաղաները: Մենք ունենք հսկայական բնական հարստություններ, վորոնք դեռ թաղնված են մեր յերկրի խորքերում, վորոնք դեռ չեն ուսումնասիրված: Շնորհիվ պրոլետա-



ընտանիքի ստեղծագործական ուժերի, նորանոր հարստութիւններ են շահագործվում և ոգտագործվում սոցիալիզմի համար,—վառելիքային հումուլթ, յերկաթ, գունավոր մետաղներ, վոսկի, քիմիական և այլ հումուլթ: Մենք ունենք ջրային ուժի հսկայական հարստութիւններ, վորոնք ամեն տարի, ամեն որ գործադրվում են սոցիալիզմը կառուցելու համար,—Դնեպրոստրոյ (վերջերս գործարկված), Ջագես, գետեր, լճեր ու ծովեր: Մենք ունենք նաև հսկայական քանակութիւն անտառներ, լավ վորակի հողեր և դանադան կլիմայական պայմաններ: Ավելացնենք սրան այն, վոր մենք տնտեսութիւնը վարում ենք աշխատանքի սոցիալիստական մեթոդներով,—սոցիալիստական մրցում, հարվածայնութիւն և այլն: Սոցիալիզմի կառուցման համար մենք նորանոր ուժեր ենք հանդես բերում, վորոնք որը որին ծավալվում են: Խորհրդային Միութեան բոլոր անկյուններում ավելի և ավելի զբաւորվում են նորանոր եներգիաներ, նորանոր կադմակերպչական ուժեր ու տաղանդներ՝ բանվորներից և կոլտնտեսականներից: Ուր ել վոր դնաս—գործարան, ֆաբրիկա, դաշտ, դու կլսես՝ «հարվածային» «սոցմրցութիւն» «հանուն տնտեսութեան» քերը: Սոցիալիստական մեթոդները արժատավորվում են կենցաղում: Սոցիալիստական հարձակման ճակատում ավելացել և ավելանում են պրոլետարիատի շարքերը:

Յեթե 1923—24 թվականներին մեղանում կային 3,3 միլիոն բանվորներ, 1930 թվ. այդ թիվը հասավ 7.7 միլիոնի, իսկ 1931—32 թվերին — 10 միլիոնի (արդյունաբերութիւն, շինարարութիւն, տրանսպորտ): Այս թիվն ավելի ևս կմեծանա 2-րդ հնգամյակում:

Ավելի ևս բարձրանում և պրոլետարիատի հեղափոխականութիւնն ու ակտիվութիւնը: Այժմ մեր կուսակցութեան անդամների թիվը հասնում և 3 միլիոնի, կոմյերիտականների թիվը—5 միլիոնի, պիոներներին—9 միլիոնի, հարվածայիններին—3.5 միլիոնի:

Աշխատանքի սոցիալիստական մեթոդները, կապիտալիստական տարրերի դեմ հարձակումը ավելի ևս մեծաթիվ հարվածայիններ կը տան 2-րդ հնգամյակում, կավելանա կուսակցականներ, կոմյերիտականներ և պիոներների թիվը: Սոցիալիստական մեթոդներն ավելի կծավալվեն, ավելի կարձատարվեն կենցաղի մեջ, շինարարութեան մեջ:

Պրոլետարիատի շարքերի վրա ավելանում են նոր ուժեր՝ գյուղի և քաղաքի յերեկվա մանր սեփականատերերից:

Յերբ մենք ասում ենք, թե յերկրորդ հնգամյակում կվերացվեն դասակարգերը, այդ չի նշանակում, թե կվերացվի նաև պետութիւնը: Ընդհակառակը, տվյալ ետպում, յերբ վերացվում են դա-

սակարգերը, յերբ վերափոխվում և մարդը և յերբ մենք դեռ շրջապատված ենք թշնամիներով—կապիտալիստներով—պետք և ամրապնդել պետութիւնը, ավելի ևս ամրապնդել պրոլետարիատի զիլտատուրան:

2-րդ հնգամյակում կուսակցութեան առաջ մեծ խնդիր և դրված իր գլխավոր դժի համար պայքարելու ասպարիզում: Կուսակցութիւնն անխնայորեն պիտի մերկացնե և ջախջախե ամեն տեսակ ոպրոտունիստական խոտորումներն իր գլխավոր դժից:

Դասակարգերի վերացումը հսկայական ջանքեր և պահանջում և պետք և սրե դասակարգային պայքարը: Բուրժուական աղդիցութեան դեմ պայքար պիտի մղել վոչ միայն կոլտնտեսութիւններում և գործարաններում, այլ և կուսակցութեան մեջ: Քանի վոր յերկրորդ հնգամյակում մնում և կապիտալիստական տարրերի վերացման խնդիրը, աջ թեքումը կմնա վորպես գլխավոր վտանգ: Սակայն սա չի նշանակում, թե մենք պիտի սահմանավորվենք միայն աջ թեքման դեմ պայքարելով: Անցյալի փորձը մեզ ցույց տվեց, վոր լինում են այնպիսի մոմենտներ, յերբ կուսակցութիւնը ուժեղ հարվածում և նաև «ձախլիկ» խոտորիչներին: Այստեղից պարզ և, վոր պայքարը յերկու Փրոնտի վրա շարունակվում և ընդդեմ ամեն տեսակ ոպրոտունիստական յելույթների, ընդդեմ հաշտվողականութեան, աջ թեքման վորպես գլխավոր վտանգի:

Այժմ, կոլտնտեսութիւնների ամրապնդման շրջանում աջ-ոպրոտունիստական տարրերը փորձում են մեղ յետ տանել դեպի կոլտնտեսութիւնների այնպիսի «ամրապնդումը», վորը փաստորեն վերադարձ և դեպի մանր սեփականատիրական տնտեսութիւնը, դեպի կոլտնտեսութեան ջլատումը:

«Ձախերն» աշխատում են կոլտնտեսութիւնն այնպես «ամրապնդել», վոր նա բոլորովին քայքայվի, արտի յամրապնդման փոխարեն նրանք ցատկում են դեպի կոմունա, վորձում են ստիպողաբար համայնացնել անասունները և առհասարակ, կոլտնտեսութիւնը վարել խորհրտնտեսութեան սիստեմով: Ուրիշ խոսքով, թե աջիւր և թե «ձախերը» խեղաթյուրում են կուսակցութեան քաղաքականութիւնը: Սա ասում և այն, վոր ինչ դիմակի տակ ել լինի ոպրոտունիզմը, պետք և վճռականապես ջախջախել նրան, պետք և մասսաներին համախմբել կուսակցութեան շուրջը, լինիյան գժի շուրջը՝ ժողովրդական տնտեսութեան բոլոր պլանները կատարելու համար:

Առաջին հնգամյակի հաջորդութիւնները, 2-րդ հնգամյակի պլանների կատարումն ու գերազատարումը խոշոր նշանակութիւն ունի

վոչ միայն ԽՍՀՄ, այլ ամբողջ աշխարհի համար: Դա յերկու աշխարհների պայքար է—սոցիալիզմի և կապիտալիզմի: Դա յերկու սիստեմների մրցակցությունն է,—սոցիալիստականի, վորն արագորեն բարձրանում է և կապիտալիստականի, վորը դեպի անկում է գնում:

Կապիտալիստական աշխարհի ճգնաժամը սրը-որին խորանում է և քանդում կապիտալիզմի արմատները: Այս բոլորը ստիպում է ամբողջ աշխարհի պրոլետարիատին իր հայացքը դարձնել դեպի իր հայրենիքը ԽՍՀՄ և ընդորինակել սոցիալիզմի կառուցման փորձը:

Մեր յերկրի ժողտնտեսության բոլոր ճակատամասերն աճում են արագ տեմպերով, իսկ կապիտալիստական տնտեսությունը ավելի և ավելի յե անդունդ գլորվում: Յեվ կապիտալիստներն ու նրանց սպասարկու սոցիալ-ֆաշիստներն անկարող են այդ անկման առաջ առնել:

Յեթե մենք կապիտալիստական յերկրների արդյունաբերության 1928 թվի արտադրանքը ընդունենք 100 տոկոս, ապա 1931 թվին ստացվում է հետևյալ պատկերը.

ՀԱՄՆ իջել է մինչև	58 տոկոս
Գերմանիայում	59,5 »
Անգլիայում	78,6 »
Ֆրանսիայում	81,3 »
Յապոնիայում	89,7 »

100 միլիոն մարդիկ դաաապարտված են սովի, գիշերում են փողոցներում, կայարաններում, չունեն բնակարան ու աշխատանք, մինչդեռ կապիտալիստները վառում են հացը, ջարդում են մեքենաները, դնդակահարում են բանվորներին, վորպեսզի «ազատվեն» ճգնաժամից:

Ֆաշիզմը կատաղել է, նա մեքենաներ է պատրաստում մարդկանց վոչնչացման համար, բանտերը լիքն են հեղափոխականներով, ապստամբներով, հազարավոր մարտիկներ են գնդակահարվում և սրանով ֆաշիզմը փորձում է պրոլետարիատին հետ կանգնեցնել հեղափոխությանից:

Ճգնաժամից ավելի ևս տառապում են գաղութային և կիսագաղութային յերկրները:

Կապիտալիստները յեղ են փնտռում ճգնաժամից՝ պատերազմի մեջ—գլխավորապես ԽՍՀՄ դեմ: Յեղ են փնտռում բանվոր դասակարգի վրա հարձակվելով: Բանվոր դասակարգը յեղ է փնտռում հեղափոխության մեջ: Հեռավոր արեվելքից յեկող լուրերը մերկացնում են բուրժուազիայի բոլոր գաղափարները, Ազգերի լիգայի «դինաթաման» բոլոր բարբառյալները:

Մենք այդպիսի յելույթներին, խաղաղության վերաբերյալ կեղծավոր խոսքերին պատասխանում ենք—մենք պատերազմ չենք ուզում, բայց յեթե վորեվ մեկը դուրս գա մեր դեմ, մենք կարող ենք դիմադրել և ցույց տալ նրան իր տեղը, կկատարենք ու կգերակատարենք 2-րդ հնգամյակի պլանները՝ հանուն կուսակցության գլխավոր գծի, ի պատասխան իմպերիալիստների պատերազմական ավանտյուրայի:

Մեր կուսակցությունը անցնում է իր մեծ նպատակի անմիջական իրագործման, մի նպատակի, վորը գիտականորեն հիմնավորված է առաջադրված է Կարլ Մարքսի և Ֆրիդրիխ Ենգելսի կողմից, վորի համար ամբողջ կյանքում պայքարել է մեր հանճարեղ ուսուցիչ Լենինը և վորի իրագործման աշխատանքը ղեկավարում է նրա լավագույն աշակերտ ընկ. Ստալինը:

Հոկտեմբերյան հեղափոխության տասնևհինգ տարում պրոլետարիատը ՀԿ(բ)Կ և Կոմինտերնի ղեկավարությամբ պատմության մեջ չտեսնված հաջողություններ ձեռք բերեց: Նա նորանոր մեծ հաղթանակներ կտանի և 2-րդ հնգամյակում:

Բաղաքացիական պատերազմի ժամանակ (1917-20 թ.) մենք գլխովին ջարդեցինք բուրժուազիայի ջոկատները—Յուդենիչ, Դենիկին, Վրանգել, Կոլչակ և այլն: Այնուհետև մեծ հաջողությամբ հաղթահարեցինք նաև ավերածությունը, սովը և վերականգնեցինք մեր յերկիրը:

Այդ հաջողությունների հիման վրա հնգամյակը կատարում ենք չորս տարում և մեծագույն խնդիրներ ենք դնում 2-րդ հնգամյակում կառուցել աշխարհիս ¹/6-ի վրա սոցիալիստական անշասկարդ հասարակություն: Այդ բոլորը մենք հաջողացրինք լենինիզմի դրոշի տակ: Այդ նույն դրոշակի տակ ել կհաղթենք համաշխարհային պրոլետարական հեղափոխության ֆրոնտում:

Թ.Ա.Դ.Մ. Վ. Մ.

ԼԵՆԻՆՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՂԹՈՂ

Իրոք վոր միայն կոմունիստական կուսակցության լենինյան ազգային քաղաքականությունն է տալիս բոլոր ազգերի աշխատավորներին իսկական ազատություն: Միայն լենինյան ազգային քաղաքականությունն ուղիղ և անշեղ կիրառման շնորհիվ են ձեռք բերվել խոշոր նվաճումները Հ. Կ. բոլոր ազգային փոքրամասնությունների տնտեսական և կուլտուրական մակարդակի բարձրացման գործում:

Այդ նվաճումները, վորոնց մասին մենք կխոսենք ներքևում, ձեռք են բերվել ազգային քաղաքականության գծով տեղի ունեցած թեքումների դեմ անխնա պայքար մղելու գնով: Չպետք է յերբեք մոռանալ, վոր ազգային հարցի շուրջը, ինչպես և մյուս ճակատներում, բուրժուազիայի և կուլակության քաղաքական վոլնչացումից հետո յեղ մնում է դասակարգային պայքարը: Բուրժուազիան ու կուլակությունը ամեն կերպ աշխատում են, ամեն միջոց ձեռք են առնում թունավորել աշխատավորության դիտակցությունը ազգային թույնով, բաժանել, անջատել մեկը մյուսից զանազան ազգերի աշխատավորներին, թշնամություն ու ատելություն ցանել նրանց մեջ, վորպեսզի անջատելով այդպիսով աշխատավորության առանձին ազգային ջուկատներին մաս մաս յեղած ուժերը, ջախջախեն և նորից նստեն աշխատավորների վրին:

Ազգային հարցում գլխավոր վտանգը մեծապետական շովինիզմն է, ազգային փոքրամասնությունների դեմ արհամարական վերաբերմունքն է նախկին տիրող ազգի կողմից: Ազգային փոքրամասնությունների կարիքներին և առանձնահատկություններին անուշաղիր և նույնիսկ թշնամական վերաբերմունքն է:

Սակայն մենք յերբեք չպիտի մոռանանք նաև ազգային փոքրամասնությունների մեջ մնացած հին, նեխված, բուրժուական նացիոնալիզմի մասին:

Ազգային հարցի ուղիղ լենինյան իրագործումը կատարվել է և կատարվում է այդ յերկու թեքումների դեմ մղվող անհաշտ բուլշևիկյան պայքարով:

Մեծ Հոկտեմբերյան 15-րդ տարեդարձի տոնի որերին վերհիշելով Հ. Կ. հայկական գաղութների աշխատավորության անցած ուղին, հարկավոր է ել ավելի սերտ կերպով համախմբել կոմկուսակցության կենտկոմի և մեր մեծ առաջնորդ Ստալինի շուրջը, ել ավելի ամրակուռ շարքերով և աննկուն կաճքով պայքարել ազգային հարցում ամեն տեսակի թեքումների դեմ, ել ավելի աշխուժով և յեռանդով լծվել տնտեսական և կուլտուրական սոցիալիստական շինարարության աշխատանքներին և ավարտելով առաջին հնգամյակը չորս տարում-ընթացիկ ավարտական տարում, կոմկուսի ղեկավարությունը անցնել յերկրորդ հնգամյակի մեծ աշխատանքներին:

Հյուսիսային կովկասի խորհրդայնացումից հետո հայ գաղութների զարգացումը ստանում է նոր ուղղություն:

Հայ բուրժուազիան ինչպես և ուրև բուրժուազիան տապալված է վերջնականապես: Այլևս հայ աշխատավորության վրա չի ծանրանում քայքայվելու և լուծվելու վտանգը, վերացել է կապիտալիստական շահագործումը:

Խորհրդային իշխանությունը հայ աշխատավորին տալիս է այն բոլոր քաղաքական և տնտեսական իրավունքները, վորով ոգտվում են ուրև և ուրիշ ազգերի աշխատավորները: Այդ ուղղությամբ խորհրդային իշխանության առաջին քայլը կայանում է նրանում, վոր Սոչու, Մայկոպի, Տուապսեյի և ուրիշ ռայոններում ապրող հայ գյուղացիները, վորոնք ցարիզմի և դենիկինչիսայի ժամանակ հողազուրկ են յեղել, ստանում են հող և ազատվում են հողը կապալով վերցնելուց առաջացած ամեն տեսակի պարտքերից:

Զբավորնորի խորհրդային պետությունը ոգնում է նրանց տնտեսությունը բարձրացնելու գործում, այնպես վոր նախկին դասակարգային շերտավորումը փոխում է իր ընթացքը:

Զբավորների թիվը տարեց-տարի պակասում է: Աճում է միջակ տնտեսությունների թիվը: Տարեց-տարի բարձրանում է թե ցանքերի տարածությունը, թե անասնաբուծությունը: Հայ գաղութների կուլտուրական կյանքը նոր թափ է ստանում: Բացվում են դպրոցներ, խրճիթ ընթերցարաններ, ակումբներ: Խորհրդային իշխանությունը խնդիր է դնում վերացնել հետամնաց ազգերի տնտեսական և կուլտուրական հետամնացությունը: 1925 թվին կազմակերպվում է նախկին Մայկոպի շրջանում առաջին ինքնուրույն Հայկական ռայոն:

Ինքնուրույն ռայոն կազմակերպելու նպատակն եր ավելի արագ թափով տանել հետամնացությունը վերացնելու աշխատանքները, հնարավորություն տալ աշխատավոր գյուղացիներին իրենց մայրենի լեզվով, իրենց միջից ընտրված մարդկանց ձեռքով կատարել տնտե-

սական և կուլտուրական հետաքննարկության վերացման աշխատանքները, լայն մասնակցություն ցույց տալով այդ աշխատանքներին:

1926 թվին կազմակերպվում է յերկրորդ Հայկական ռայոն-նախկին Դոնի շրջանում, վորը անվանվում է Մյասնիկյան ռայոն:

Կազմակերպված են նաև առաջին հայկական գյուղխորհուրդները ուրիշ ռայոններում ընկած հատ-հատ գյուղերում (Սոչու, Տուապսեյի, Դորյաչիյ Կուլչի, Պրիկուսկի և այլ ռայոններում), հիմնված է յերկ-րային առաջին թերթը «Մուրճ, Մանգաղ» (հիմա «Դրոհ»-ը), բաց-ված է մանկավարժական տեխնիկումը: Հիմք է դրված հայ հրապարակչությանը Հյուսիսային Կովկասում: Բացվում է հայկական թա-տրոնը: Խորհրդային իշխանությունը, կոմունիստական կուսակցու-թյան ղեկավարությամբ վոչ թե խոսքով, այլ գործով և ապացու-ցում ազգային խնդրի լուծումը:

Այն առաջին քայլերը, վորը արել է խորհրդային իշխանու-թյան այդ ուղղությամբ հայկական գաղութներին վերաբերյալ, վորի մա-սին մենք արդեն թուղցիկ կերպով խոսքից, միայն առաջին քայլեր են:

Հիմա մենք թվական տվյալներով ցույց կտանք, թե ինչպիսի գերբնական միջոցառումներով է կատարվել հայ աշխատավորության տնտեսական և կուլտուրական հետաքննարկության վերացումը առաջին հնգամյակում:

Մյասնիկյան ռայոնի և հարևան ուսսական Մատվեյև-Կուրգանի ռայոնի համեմատությունը ցույց կտա այս ուղղությամբ կատարված քայլերը:

Հետաքննարկության վերացման համար բնորոշ է տնտեսական և կուլտուրական կարիքների համար ծախսված գումարը ամեն մի շնչի վրա հաշված: Այդ տեսակետից մենք կստանանք հետևյալ պատկերը. Մյասնիկյան ռայոն: Ծախսվել է ամեն մի շնչի տնտեսական և կուլ-տուրական կարիքների վրա 1927-28 թվին 9 ռ. 80 կ., 1928-29 թվին 2 ռ. 75 կ., 1930 թ. 12 ռ. 43 կ., 1931 թ. 15 ռ. 40 կոպ.:

Մատվեյև-Կուրգանի ռայոն. նույն ծախսերը կազմելիս յե-ղել է 1927-28 թվին 4 ռ. 60 կ., 1928-29 թ. 5 ռ., 1930 թ. 5 ռ. 40 կ. և 1931 թ. 8 ռ. 73 կոպ.:

Ինչպես տեսնում ենք, տարեցտարի Մյասնիկյան ռայոնում ամեն մի շնչի վրա ծախսվում է ավելի շատ գումար, տնտեսական կուլտուրական կարիքների համար, քան ուսս ռայոններում: Այս թվերը ապացույց են այն բանին, վոր խորհրդային իշխանությունը իսկապես, գործնականապես ողնում և աջակցում է ազգային փոքրա-մասնություններին՝ վերացնելու իրենց հետաքննարկությունը և հասնե-

լու ուսս առաջավոր ռայոններին: Նույն դրությունն է տիրում նաև Հայկական ռայոնում: Այնտեղ էլ հետաքննարկությունն արագ թափերով վերանում է:

Պետք է ասել, վոր Հայկական ռայոնում այդ թափը ավելի մեծ է, քան Մյասնիկյան ռայոնում:

Հայկական ռայոնում այդ ծախսերը կազմելիս են յեղել 1930 թ. 21 ռ. 80 կ., 1931 թ. 26 ռ. 40 կ. ամեն մի շնչին: Շնորհիվ կուսակ-ցության և խորհրդային իշխանության այդպիսի քաղաքականության, հայկական գաղութների աշխատավորությունը վերացնում է իր հե-տաքննարկությունը և տարեց տարի ավել և ավելի բարելավում իր տնտեսական և կուլտուրական դրությունը:

Վորպես առաջին հնգամյակի հանրագումար, մենք կարող ենք ասել, վոր հայ բանվորը վոչնչով չի տարբերվում ուսս բանվորից, նա նույնպիսի իրավունքներով է ոգտվում, նույնպիսի հնարավորու-թյուն ունի առաջ գնալու և նույնպիսի ենտուղիազմով է աշխատում ամ-բողջ բանվոր դասակարգին պատկանող սոցիալիստական-արդյունաբե-րական ձեռնարկներում, ինչպես և ուսս բանվորը:

Հայ աշխատավոր գյուղացին Հյուսիսային Կովկասում նույնպես հետ չի մնում ուսս աշխատավոր գյուղացուց: Համատարած կոլեկտի-վացման յերկրամասում հայկական ռայոնները հետ չեն մնում ուսս ռայոններից: 1931 թ. նոյեմբերի 1-ին կոլեկտիվ տնտեսություն-ներում ընդգրկված են Մյասնիկյան ռայոնում տնտեսությունների 82,9 տոկ.

Հայկական ռայ.—տնտ. 80, 4 տոկ.

Սոչու և ուրիշ ռայոնների հայկական գյուղերում—81 տոկոս: Համատարած կոլեկտիվացման հետ միաժամանակ հիմնականում կա-տարվել է նաև կուլակների վորպես դասակարգի վոչնչացումը:

Կոլեկտիվացման ավարտումը հիմնականում տվել է ցանքսերի տարածության խոշոր ավելացում: Ավելացել է նաև զգալի չափերով ամեն մի տնտեսության հասնող յեկամուտը:

Յեթե անհատական տնտեսություններում նրանց յեկամուտը միջին թվով հավասար էր 400-500 ռուբլու, ապա հիմա այդ յեկամու-տը հավասար է 700—900 ռ: Նախահղափոխական տվյալների բացակա-յությունը մեղ դրկում է համեմատելու հնարավորությունից: Բայց անհերքելի յե այն փաստը, վոր հիմա աշխատավոր գյուղացու, մանա-վանդ կղանտեսականի յեկամուտը ավելի բարձր է, քան հեղափո-խությունից առաջ:

Հայկական գաղութների սոցիալիստական շինարարությունը կա-տարվում է գլխավորապես գյուղատնտեսության սոցիալիստական

վերականգնման գծով: Մյասնիկյան ռալոնում արդեն գործում է ՄՏԿ, տրակտորներով և բոլոր անհրաժեշտ մեքենաներով, 16 կալսիչ մեքենաներով (մոլոտիկա): Այս ռալոնում, վորպես քաղաքամերձ ռալոնում, զարգանում է կաթնա-անասնաբուծությունը և բանջարաբուծությունը:

Հայկական ռալոնում և Սոչու ռալոնի հայկական գյուղերում, վորտեղ բնական պայմաններն աննպաստելի յեն տրակտորի դործածման համար, տրակտորներ դեռ չեն աշխատում, սակայն այստեղ էլ անց է կացվում խոշոր աշխատանք ծխախոտագործական աշխատանքների մեքենայացման ուղղությամբ: Արդեն գործում են քաղհանի և շիթիլները տնկելու մեքենաներ: Փորձեր են կատարվում տերևները կտրող, տերևները թելող և ուրիշ մեքենաներ ստեղծելու համար: Կառուցվում են ծխախոտի մարազներ, ծխախոտը չորացնելու և պահելու և այլն:

Առանձին ուղադրություն է դարձվում այդ ռալոններում այգեգործությունը զարգացնելու վրա, անասնաբուծության, մանավանդ խոզաբուծության և ճագարաբուծության վրա:

Հայկական ռալոններում զարգանում է նաև սոցիալիստական արդյունաբերությունը: 1-ին հնգամյակի ընթացքում Մյասնիկյան ռալոնում նորոգվել են մեքենաաղացները և աղյուսի գործարանը:

Հայկական ռալոնում նորոգվել և աշխատանքի յեն անցել 2 խոշոր անտառի մշակման գործարաններ:

Չափազանց մեծ նշանակություն ունի նաև այն հանգամանքը, վոր առաջին հնգամյակում Հայկական ռալոններում մեծ աշխատանք է տարվել անգրագիտության վերացման ուղղությամբ և անց է կացվում նաև ընդհանուր պարտադիր ուսուցումը: Այդ ուղղությամբ կատարված աշխատանքների մեջ աչքի յեն ընկնում դպրոցական շենքերի կառուցումը, վորի վրա ծախսվել են ահագին գումարներ: Կառուցվել են նաև հիվանդանոցներ Մյասնիկյան և Հայկական ռալոններում, Մյասնիկյան ռալոնում 2 հիվանդանոց 45 մահճակալով, իսկ Հայկական ռալոնում 2 հիվանդանոց 12 մահճակալով: Այսպես է ահա Հայկական գաղութների զարգացման վոչ լրիվ հանրագումարը Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո:

Գաղութներն ազատվել են ցարիզմի կեղեքումից և կապիտալիստական շահագործումից, և նոր սոցիալիստական ուղիով, արագ թափերով զարգանում են: Աշխատավոր տնտեսությունների քայքայման ու լքման, աշխատավորների աղքատացման պրոցեսը փոխվել և խոշոր կոլեկտիվ տնտեսություն ստեղծելու գործով, աշխատանքների մեքենայացման և աշխատավորների տնտեսական և կուլտուրական դրու-

թյունը բարելավելու գործով: Վերացվում է անգրագիտությունը ու մտցված է նախնական ընդհանուր պարտադիր ուսուցում:

խոշոր քայլեր են արված հայկական գաղութներում արդյունաբերություն ստեղծելու ու բանվորական կադրերը ավելացնելու համար:

Սակայն այսքանով կուսակցությունն ու խորհրդային իշխանությունը բավականանալ չեն կարող:

Հայկական ռալոններն ու բոլոր հայ աշխատավորները, ինչպես նաև մեր ամբողջ յերկրամասը, կանգնած են առաջիկա յերկրորդ հնգամյակի հսկայական խնդիրների առաջ: Կուսակցության XVII ռդ կոնֆերանսը, ինչպես նաև կուսակցական կադմակերպության VII-րդ Յերկրային կոնֆերանսը, իրենց վորոշումներով դրել են ամբողջ յերկրի ու յերկրամասի բանվորի և կոլտնտեսականի առջև հոյակապ քաղաքական և տնտեսական խնդիրներ:

Հարկվոր է գ. տ. մեջ այնքան խորացնել մեքենաների գործածումը, վորպեսզի II-րդ հնգամյակի ընթացքում «գ. տ. աշխատանքը դառնա ինդուստրիալ աշխատանքի մի ճյուղը» և «գյուղի և քաղաքի միջև յեղած տարբերությունը լիովին վերացնելու համար բոլոր պայմանները ստեղծվեն»։ հարկավոր է զարգացնել գ. տ. մթերքների նախնական մշակման գործը՝ բանալով համապատասխան գործարաններ:

Հարկավոր է ճանապարհների կառուցմամբ հեշտացնել հեռավոր անկյուններում ընկած և խոշոր արդյունաբերական և կուլտուրական կենտրոններից կտրված գյուղերի կապը այդ կենտրոնների հետ և այլն: Այդ խնդիրների իրագործումը Հայկական ռալոնների վերաբերյալ կատարվում է նույնպես վճռականությամբ, նույնպիսի արագ թափով, ինչպես առաջ և նպատակ ունի II-րդ հնգամյակի վերջում լիովին վերացնել հայկական գաղութների հետամնացությունը, վերածել հայկական գաղութների կոլտնտեսականին «սոցիալիստական հասարակավարդի ակտիվ աշխատավորի»:

Յերկրորդ հնգամյակի պլանի ուրվագծի համաձայն, Հայկական ռալոնների ապագա զարգացումը ուրվագծվում է հետևյալ կերպով:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Հայկական և Մյասնիկյան ռալոնները, ինչպես նաև Սոչու ռալոնի հայկական գյուղերը, առաջիկա հնգամյակին վերջնականապես ավարտելու յեն կոլեկտիվացումը: Մյասնիկյան ռալոնի մեքենայացումը հասնելու յե այնպիսի կետի, յերբ բոլոր դաշտային աշխատանքները կատարվելու յեն մեքենաներով և ուժեղանալու յե ՄՏԿայանը:

Ստանալով կաթնա-անասնաբուծական թեքում, ռալոնը պիտի կապվի Ռոստովի հետ, քաղաքին կաթնա-անասնաբուծական մթերքներ մատակարարելու համար: Հայկական ռալոնի ու Սոչու ռալոնի հայկական գյուղերը ստանում են ծխախոտաբուծական-աղբեբուծական թեքում: Այդ կուլտուրաների մշակումը յերկրորդ հնգամյակին կատարվելու յե լայն մեքենայացման հիմունքով և գիտություն նվաճումների ոգտագործմամբ:

Ձեռնարկելիք միջոցները հնարավորություն են տալու գ. տ. յե-կամուտը ավելացնել 2—3 անգամ 1932 թ. համեմատությամբ:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Խոշոր արդյունաբերական ձեռնարկներ կառուցելու նախատվյալներ չկան Հայկական ռալոնի համար:

Բայց անտառների շահագործման համար յերկրորդ հնգամյակում բացվելու յեն անտառա-քիմիական գործարաններ, անտառի մնացորդներն ոգտագործելու համար: Մյաանիկյան ռալոնը Ռոստովից ստանալու յե ելեկտրականություն և սերտորեն կապված և լինելու Ռոստովի հետ:

Կուլտուրական և սոց-կենցաղային ծախսերն ավելանում են 2—3 անգամ:

Կուլտուրական և սոց-կենցաղային կարիքների համար Հայկական ռալոններում և գյուղերում յերկրորդ հնգամյակում բաց թողնվելիք գումարները 2—3 անգամ աճում են: 2-րդ հնգամյակի ընթացքում անց և կացվելու 10-ամյա պարտադիր ուսուցումը:

Ավելանում են մանկապարտեզները, մանկապարտեզները և այլ նախադպրոցական հիմնարկները:

Հիվանդանոցների և ամբուլատորիաների թիվը և հիվանդաների ընդունելությունն ավելանում և 2—3 անգամ:

Այս բոլոր տվյալներն իրավունք են տալիս պնդելու, վոր յերկրորդ հնգամյակի վերջում, Հյուսիսային Կովկասի հայ լանդիում-թյունն ու աշխատավորությունն այնքան առաջ կդնա իր տնտեսական և կուլտուրական զարգացման մեջ, այնքան խոշոր կլինեն գաղութների սոցիալիստական վերակառուցման գործի հաղթանակները, այնքան սերտ կերպով կկապվի լայն աշխատավորությունը յերկրամասի մյուս ազգերի աշխատավորության հետ, վոր բոլորովին մոռացության կհանձվեն անցյալի ազգային ատելությունը, ազգային խտրությունն ու անհավասարությունը: Բոլոր ազգերի բանվորներն ու աշխատավորներն իսկապես կկազմեն մի հարազատ ընտանիք, կզառ-

նան սոցիալիստական հասարակության հավասար քաղաքացիներ, վորոնք վոչ մի զրդապատճառ չունեն իրարից բաժանվելու, իրար դեմ թշնամանալու, իրար ատելու:

Սակայն այս չի նշանակում, վոր այլ ևս ազգային լեզուները, կուլտուրայի ազգային ձևը (ազգային լեզվով դասավանդելը, թատրոնը, ազգային հրատարակչությունը և այլն) վերանալու յեն և բոլորին մի լեզվով խոսելու, մի լեզվով կուլտուրային մասնակցելու պահանջ կարելի յե դնել:

Մեր դասակարգային թշնամին միայն կարող և այդպես դնել հարցը: Մենք ստիպված ենք ամենավճռական կերպով շեշտել, վոր ազգային լեզուների և ամեն ազգի աշխատավորի, մայրենի լեզվով պրոլետարական սոցիալիստական կուլտուրային մասնակցելու իրավունքը մնում և անխախտ և յերկրորդ հնգամյակի ընթացքում, և յերկրորդ հնգամյակից հետո:

Ազգերի ձուլման պրոցեսը կատարվելու յե բնականորեն, առանց վորև հարկադրման, առանց վորև ստիպողականության: Հիմիկվանից ասել, թե ի՞նչ ձևով, ի՞նչպիսի ճանապարհով և կատարվելու այդ ձուլումը—անկարելի յե:

Համենայն դեպս կարող ենք ասել, վոր մինչև այն ժամանակ, յերր սոցիալիզմը կհաղթի ամբողջ աշխարհում, յերբ սոցիալիզմը կդգաոնա աշխատավորների կենցաղը, մինչև այդ ժամանակ խոսել ազգերի ձուլման մասին կ'նշանակի թշնամու ջրաղացին ջուր լցնել: Այս հարցի մասին խոսելով, XVI-րդ կուսակցական համագումարում ընկեր Ստալինը ասել և.

«Կարող և տարորինակ թվալ, վոր մենք ապագայում ազգային կուլտուրաների յի մի ձուլման և ձևով ու բովանդակությամբ, մի ընդհանուր լեզվի կողմնակիցներս, միևնույն ժամանակ հանդիսանում ենք ազգային կուլտուրայի ծաղկման կողմնակիցները տվյալ մոմենտում, պրոլետ. դեկտատուրայի ժամանակաշրջանում:

Սակայն այստեղ տարորինակ վոչինչ չկա: Հարկավոր և ազգային կուլտուրաներին հնարավորություն տալ զարգանալու և ծավալելու իրենց բոլոր ներքին հնարավորությունները, վորպեսզի պայմաններ ստեղծել նրանց մի ընդհանուր կուլտուրայի ձուլման համար, մի ընդհանուր լեզվով: Ազգային բառ ձևի և սոցիալիստական ըստ բովանդակության կուլտուրաների ծաղկումը պրոլետարիատի դեկտատուրայի պայմաններում, մի յերկրում, նրանց մի ընդհանուր սոցիալիստական (և ըստ ձևի, և ըստ բովանդակության) մի ընդհանուր լեզվով, կուլտուրայի ձուլման համար, յերբ պրոլետարիատը կհաղթի ամբողջ աշխարհում և սոցիալիզմը կմտնի կենցա-

դուժ, — սրանում է հենց կայանում ազգային կուլտուրայի լենինյան հարցադրությունը ղեկավարված»:

Այսպես ուրեմն, մենք տեսանք, վոր Հոկտեմբերյան հեղափոխությունը, Հ. Կ-ի հայ աշխատավորության առջև ընդհանուր է մի նոր, հսկայական ընդունակություն տարբեր մի ճանապարհ:

Դա հայ աշխատավորի հսկայական ազատագրման ճանապարհն է: Առաջ, հայ դաշնակցությունը զարգանում էր կապիտալիզմը, զարգանում էր ինչպես դեռ հետ միաժամանակ հայ բուրժուազիայի, ինչպես նաև ռուս բուրժուազիայի և ցարիզմի կողմից աշխատավորներին շահագործելու և կեղեքելու պայմանները: Հայ աշխատավորությունը յենթակա յեր ազգային կեղեքման, անհավասարության:

Ազգային կուլտուրայի զարգացումը կրում էր բուրժուական բովանդակություն և ծառայում էր աշխատավորին և բանվորին կապիտալիստին յենթարկելու նպատակին:

Դաշնակցականների «անկախ» Հայաստան ստեղծելու քաղաքականությունը ավանտյուրա յեր, աշխատավորին իսկական ազատագրական հեղափոխական պայքարից, բանվորական սոցիալիստական հեղափոխությունից անջատելու և հայ կապիտալիստների համար արյուն թափելու քաղաքականությունն էր, վորի պատճառով հայ աշխատավորությունը կոտորածների և ավերածների, դադի և թափառականության դո հեր դառնում:

Այժմ վերացել է շահագործումն ու կեղեքումը, վերացել է խոշոր չափերով և մոտ ապագայում վերանալու յե իսպառ ազգային փոքրամասնությունների հետամնացությունը թե տնտեսական, թե կուլտուրական ասպարեզներում:

Ազգային աշխատավորները համախմբվում են սոցիալիզմի կառուցման ընդհանուր դրոժի շուրջը և կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, ենտուղիազմով, սոցիալիզմի ու հարվածայնությամբ, չտեսնված թափերով կենսագործում են այդ համաշխարհային պատմական նշանակություն ունեցող գործը: Հ. Կ. Հայկական ռալոնների աշխատավորությունը միայն պրոլետարական ղեկատուության ուրով հնարավորություն ստացավ ստեղծել ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրա, ազատվելով բուրժուական-դաշնակցական կուլտուրայի ստրկացումից ազդեցությունից:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ

(Պատմական ակնարկ)

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԴԱՇՆԱԿՆԵՐԻ ՈՐՈՒՐ

Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունից առաջ Հայաստանի սահմաններին հասան միայն 12 տարի առաջ: Հայաստանի բանվորներին և աշխատավորներին հաջողվեց խլել իշխանությունը դաշնակներից միայն 3 տարի հետո այն որից, յերբ արդեն Ռուսաստանում հաստատված էր խորհուրդների իշխանությունը:

Սակայն ինչ էր ներկայացնում իրենից Հայաստանն այն յերեք տարիների ընթացքում, յերբ նա գտնվում էր դաշնակների տիրապետության տակ:

Փետրվարյան հեղափոխությունից հետո, կերենսկու կառավարության կողմից Անդրկովկասում նշանակված բուրժուա-կապիտալիստական Անդրկովկասյան հատուկ հանձնաժողովը (ОЗАОМ) հետևողականորեն պաշտպանում էր Անդրկովկասի բուրժուազիային և հետադիմական կապիտալիստությունը պրոլետարական հեղափոխությունից, անխնա ձնում բանվորական և գյուղացիական շարժումները և գնդակահարում հեղափոխականացած ղեկավորներին:

Կովկասյան Ֆրոնտից դեպի իրենց հայրենիք վերադարձող ղեկավորներից հազարավորները վոլնչացվեցին Անդրկովկասյան հակահեղափոխականների կողմից: Բոլորի հիշողության մեջ դեռ թարմ է արյան այն բաղնիքը, վոր կազմակերպվեց Շամխուր կայարանում (Ազրեջանում)՝ Անդրկովկասի հակահեղափոխական կառավարության անմիջական ղեկավարությամբ, տուն վերադարձող ղեկավորներին դիմաթափ անելու պատրվակի տակ:

Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակը կենտրոնական Ռուսաստանում մահու չափ վախեցրեց Անդրկովկասի բուրժուազիային և նրա հակահեղափոխական գլխավոր կուսակցություններին՝ մենշևիկներին, դաշնակներին և մուսաֆաթիստներին:

Խորհրդային Ռուսաստանի կառավարությունից նշանակված արտակարգ լիազոր ընկ. Շահումյանի իշխանությունը նրանք հրաժարվեցին ընդունել և նույնիսկ փորձ արին նրան ձերբակալել:

Ռեզուլյուցիայի հեղափոխական Ռուսաստանի հեռավորություններից, բանվորական շարժման թուլություններից (բացի Բազում), սկզբում գերմանական և տաճկական և ապա ղաջնակից իմպերիալիզմի անմիջական ոժանդակություններից առհասարակ հակահեղափոխական կոստակցությունները հայտարարեցին Անդրկովկասի «անկախություն» հեղափոխական Ռուսաստանից, հիմնելով Անդրկովկասի «հանրապետություն»:

Միայն Բազմի հեղափոխական պրոլետարիատը, բոլշևիկների ղեկավարությամբ, ամուր պահպանեց խորհուրդների դրոշմը իր ձեռքում, պարտություն մատնելով բուրժուական կոստակցությունների հակահեղափոխական յեղությունները: Բազմի խորհրդային իշխանությունը հնարավոր չեղավ տապալել միայն տաճկական և անդրիական սվինների ոժանդակությամբ և մենշևիկների, ղաջնակների և եսերների զգվելի դավաճանությունը:

Սակայն Անդրկովկասյան հանրապետությունը շատ կարճ կյանք ունեցավ: Հայկական, վրացական և թյուրքական (ադրբեջանական) բուրժուազիան չկարողացան մի «հանրապետական» առաստաղի տակ ապրել, և ամեն մեկը նրանցից հայտարարեց «իր» յերկիրը «անկախ հանրապետություն»: Այսպիսով ստեղծվեցին անդրկովկասյան յերեք բուրժուական «հանրապետություններ», վորոնցից մեկն էր ղաջնակների «անկախ Հայաստան»:

Առանձին «հանրապետությունների» ստեղծումով վոչ միայն չվերացան տղաքամիջյան թշնամությունները, վոչ միայն չմեղմացան հայկական, վրացական և ադրբեջանական բուրժուազիայի միջև յեղած հակասությունները, այլ ընդհակառակն, առեկռությունն ու թշնամանքը աճելի սրվեց: Անդրկովկասը, դարձավ ազգամիջյան ռովինիստական պայքարների քաղաքացիական պայքարների:

Յուրաքանչյուր «հանրապետություն» ցանկանում էր «իր» յերկրի սահմաններն ընդարձակել ի հաշիվ հարևան յերկրի: Յուրաքանչյուր «հանրապետություն» թալանի, բնաջնջումների, ներքին կռիվների միջոցով ցանկանում էր «մաքրել» «իր» յերկիրը ոտաբներից: Ազգային առեկռությունը ծայր աստիճանի յեր հասել: Դաջնակներն իրենց կարճ տիրապետության ընթացքում, յերկու անգամ պատերազմեցին Տաճկաստանի հետ (և յերկու անգամն էլ պարտվեցին), մի անգամ՝ Վրաստանի հետ և մի քանի անգամ Ադրբեջանի հետ: Բացի այդ արտաքին պատերազմներից, ղաջնակներն իրենց խմբերով և մանուկներով թալանում և բնաջնջում էին Հայաստանի թուրքական և ռուսական գյուղերը, կոտորելով հազարավոր խաղաղ բնակչություն: Այս բոլոր ավերումները, պատերազմները կատարվում էին ղաջնակից հաղթող պետությունների (անդրիացիների, ֆրանսիացիների և

ամերիկացիների) քթի տակ, նրանց դրոշմով և նրանց հավանությունով: Փաստորեն Անդրկովկասի տերն ու տիրականը ֆրանսիական և անդրիական իմպերիալիստներն էին, վորոնք աչք ունեյին Բազմի նավթի վրա և վորոնց համար Անդրկովկասի ժողովրդների թշնամությունը շատ ձեռնտու յեր իրենց տիրապետությունն ամրապնդելու համար: Չէ՞ վոր բոլոր իմպերիալիստների զխավոր իմաստությունը «բաժանիր, վոր տիրես» լողունքն է:

Հասկանալի յե, վոր Հայաստանի բանվորների և աշխատավոր գյուղացիների դրությունն այդպիսի պայմաններում բոլորովին անտանելի յեր: Անվերջ կռիվները գրկում էին յերկիրն աշխատող ձեռքերից: Աշխատանքի ընդունակ բոլոր տղամարդիկ դառնում էին բանակում: Դյուղացին մոռացել էր վար ու ցանքսի մասին: Դադաքներում և գյուղերում թափվել էին տասնյակ հազարավոր զաղթականներ: Հայաստանը դարձել էր վորբերի, քաղցի, սովի, վարակիչ հիվանդությունների, զաղթականության համատարած յերկիր: Միայն մի խումբ արտոնյալ պաշտոնյաները, սպեկուլանտները, խմբապետներն ու մանուկներն էր ժողովրդի թշնամությունից, նրան անխնա թալանելով, իրենց համար բարկեցիկ և փարթած կյանք եին ստեղծել:

Ժողովրդական վողջ անտեսությունը, թե արդյունաբերությունը և թե գյուղատնտեսությունը ծայր աստիճան քայքայվեցին, այնպես վոր նույն իսկ դժվար է թվական ամյալներով ցույց տալ այդ քայքայման չափը, քանի վոր մի շարք ասպարեզներում քայքայումը կատարվել էր հիմնահատակ: Ավերող է խոսել նույնիսկ վորեւ շինարարության մասին, վորովհետեւ վոչ մի շինարարություն չկատարվեց Հայաստանում ղաջնակների տիրապետության որոք:

ՄԱՅԻՍԱՆ ԱՊՍԱՄԲՈՒԹՅՈՒՆ

Բնական է, վոր Հայաստանի բանվորներն ու աշխատավոր գյուղացիներն այդպիսի դրություն յերկար տանել չէին կարող: Դաջնակների իշխանությունն ատելի յեր բոլոր աշխատավորների համար: Բոլոր մտածում էին մի յելք գտնել՝ ազատվելու այդ ատելի իշխանությունից: Իսկ յելքը միայն մեկն էր՝ ապստամբել մանուկների տական կոստակցության դեմ և հաստատել բանվորների ու գյուղացիների խորհրդային իշխանություն, ձեռք մեկնել հեղափոխական Ռուսաստանին և ընդհանուր ֆրոնտ կազմել իմպերիալիզմի դեմ: Այսպիսի յելք էին ցույց տալիս բանվորներին և գյուղացիներին Հայաստանի դեռ այն ժամանակ սակավաթիվ բոլշևիկները: Հասկանալի յե, վոր Հայաստանի բոլշևիկները կատաղի հալածանքի էին յենթարկվում խմբապետական կառավարության կողմից: Նրանց բանտարկում, աքսորում, գնդակահա-

բում էյին: Սակայն հալածանքի միջոցով հեղափոխութեան առաջն առնել չի կարելի: Բոլշևիկների ագիտացիան ժողովրդի սրտիցն եր բղխում: Յերկիրը գնում եր արագ քայլերով դեպի պրոլետարական հեղափոխութիւնը:

Հայաստանի բանվորների և գյուղացիների առաջին մեծ ապստամբութիւնը բռնկվեց 1920 թվի մայիս ամսին, Ապստամբեցին Ալեքսանդրապոլի (ներկայիս Լենինականի) բանվորները և մայիսի 10-ին իշխանութիւնն իրենց ձեռքը վերցրին: Բանակը միացավ ապստամբներին: Ապստամբութիւնը տարածվեց Կարսում, Սարիղամիշում, Նոր-Բայազետում, Չաղախում, Իգդիրում և այլն: Յերևանի աշխատավորութիւնը մայիսի 1-ի իր հսկա ցույցերով ցույց տվեց իր պատրաստակամութիւնը դաշնակների իշխանութիւնը տապալելու համար: Դաշնակները սկզբում կորցրին իրենց գլուխը, սակայն նկատելով, վոր ապստամբութիւնը ղեկավարելու, գլխավորելու և հաղթական վախճանի հասցնելու համար դեռ թույլ և յերկրում կոմունիստական կուսակցութիւնը, սիրտ առան: Հավաքելով մտուղբերիստական խմբերին, Դենիկինյան սպաներին և գեներալներին, կուսակներին և սպեկուլյանտներին, նրանց հաջողվեց ժամանակավորապես արշաւ մեջ խեղդել բանվորա-գյուղացիական ապստամբութիւնը: Բանտերը լցվեցին ապստամբների լավագույն ղեկավարներով, նրանցից շատերը զոհ գնացին սպիտակ տերրորին և մտուղբերիստական վրեժխնդրութեան և գնդակահարվեցին: Մայիսյան ապստամբութիւնը պարտվեց այն պատճառով, վոր չկար ապստամբութիւնը ղեկավարող մի ընդհանուր կենտրոն, դեռ թույլ էյին պրոլետարիատի կուսակցութեան-կոմունիստների կազմակերպութիւնները տեղերում: Իսկ ընդհանուր ճշմարտութիւն և, վոր առանց պրոլետարիատի կուսակցութեան ամբողջ ղեկավարութեան-պրոլետարական հեղափոխութիւնը հաղթանակել չի կարող:

ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Սակայն մայիսյան ապստամբութեան պարտութիւնը չփրկեց դաշնակներին վերջնական կործանումից: Լրբացած ու հարբած աշխատավորների վրա տարած իրենց հաղթանակից, դաշնակներն սկսեցին ու ավելի սաստկացնել իրենց տերրորը, և իրենց ավանտյուրիստական քաջագործութիւնները: Համախմբելով իրենց շուրջը յերկրի բոլոր հակահեղափոխական տարրերին՝ սկսած մինչև իրենցից մինչև «Ժողովրդական» կուսակցութիւնը, դաշնակներն սկսեցին նոր պատերազմ տաճիկների դեմ: Ժողովրդական մասսաների թշվառութիւնը ծայր առ-

տիճանի հասավ, տաճիկական բանակներն սկսեցին առաջ շարժվել դեպի յերկրի ներքին գավառները: Դաշնակցական բանակը, վորը վոշթե ռազմական գիտութեան և տեխնիկայի հիմունքներով կազմակերպված բանակ եր, այլ անգրագետ խմբապետների ձեռքին խաղալիք դարձած խուժան, սկսեց ճանձի պես նահանջել առանց կռիւի, ատելով իր պետերին, ատելով իր իշխանավորներին, վորոնք հարձակվող թշնամուց ավելի նախընտրելի էյին իր համար: Նորից գաղթականների քարավաններ, նորից վորրեր, նորից սով ու կոտորած, նորից անմշակ և խոպան դաշտեր: Հարեան Աղբրեջանում՝ Բագվի պրոլետարիատի ապստամբութեամբ և հաղթական Կարմիր բանակի ոժանդակութեամբ արդեն հաստատված եր խորհրդային իշխանութիւնը: Հայաստանի բանվորների և գյուղացիների հայացքն ուղղված եր դեպի կարմիր Աղբրեջան: Յեւ խկապես, նոյեմբեր ամսին, Ղաղախի հեղափոխական գյուղացիութիւնը նորից ապստամբութեան դրոշմ և բարձրացնում: Դաշնակներն շտապում են ամոթալի հաշտութիւն կնքել տաճիկների հետ, տալով նրանց Կարսը, Արդահանը, Սարիղամիշը և Իգդիրը, վորպեսզի ճնշեն Ղաղախի գյուղացիութեան ապստամբութիւնը: Սակայն Կարմիր բանակը ռզնութեան և հասնում ապստամբներին, դաշնակցական խմբերը պարտութեան են մատնվում և 1920 թվի նոյեմբերի 29-ին Հայաստանում հայտարարվում և խորհրդային իշխանութիւնը:

ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ՀԱԿԱՇԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Յերիտասարդ խորհրդային իշխանութիւնը շատ ծանր ժառանգութիւն ստացավ դաշնակցական կառավարութիւնից: Ժողովրդական մասսաները հյուժոված, քայքայված էյին, ժողովրդական տնտեսութիւնն ամբողջապես կաղծալուծված: Մինչդեռ սպեկուլյանտների, բարձրասիճան պաշտոնյաների, խմբապետների խմբակը իր նկուղները լցրել եր թալանած կենսամթերքներով: Պետական պահեստներն իսպառ դատարկ էյին, մինչդեռ անհրաժեշտ եր կերակրել վորրերի, գաղթականների, բանվորների հոծ մասսաները: Վրաստանը դեռ գտնվում եր մենշեիկներ իրապետութեան տակ և այդ պատճառով ել հնարավոր չեր Խորհրդային Ռուսաստանից հացի և այլ պարիւնավորում ստանալ: (Ռուսաստանը Հայաստանին կապող յերկաթուղին անցնում և Վրաստանի վրայով): Այնուամենայնիվ հեղափոխական Ռուսաստանը անմիջապես ռզնութեան և հասնում Խորհրդային Հայաստանին, ուղարկելով բավականաչափ փոսիկ դրամ և հաց՝ Աղբրեջանի վրայով: Այդ ռզնութիւնն ավելի ընդարձակ ծավալի չե հասնում, յերբ 1921 թվի սկզբներին Վրաստանում նույնպես հաղթանակում և խորհրդային իշխանութիւնը:

Սակայն խորհրդային Ռուսաստանի ոգնության հետ միասին անհրաժեշտ էր նաև դուրս բերել խմբապետների, սպեկուլյանտների մասնավոր պահեստներում և նկուղներում թաղցրած հացն ու պարենային այլ մթերքները՝ ժողովրդի ծով կարիքները բավարարելու համար։ Յերիտասարդ խորհրդային կառավարությունը ձեռնարկում է կոնֆիսկացիայի յենթարկելու թալանված կենսամթերքները։ Սպեկուլյանտները, կուլակները, խմբապետները, ամեն տեսակի առևտրականներն իսկույն տեսնում են, վոր խորհրդային կառավարությունը վոչ միայն հնարավորություն չի տալիս շարունակելու իրենց թալանը, այլ նույնիսկ թալանված ապրանքները հետ ե խլում ժողովրդական մասսաներին վերադարձնելու համար։ Իհարկե այդ խմբապետներին և սպեկուլյանտներին դուր գալ չեր կարող։ Իսկ ժողովրդի այդ տղրուկները այլն ժամանակ դեռ բավական մեծ ուժ եյին ներկայացնում մանր-բուրժուակն Հայաստանում։ Այս հանգամանքն ոգտագործեցին դաշնակցականները, վորոնց ղեկավարներից շատերն ազատ ման եյին գալիս և 1921 թվի փետրվար ամսին ապստամբություն բարձրացրին խորհրդային իշխանության դեմ։ Իրենց այդ հակահեղափոխական արկածախնդրությունը հաղթական վախճանի հասցնելու համար, դաշնակները դիմեցին տաճիկ փաշաների ոգնության, մի անգամ ել ապացուցելով այն ճշմարտությունը, վոր բուրժուազիան չափապատ ե մոռանալու իր բոլոր թշնամությունները հարևան բուրժուազիայի հետ, յերբ հարցը վերաբերում ե բանվորական շարժման դեմ պայքարելուն, յերբ վտանգ ե սպառնում իր դասակարգային շահերին։

Սակայն Հայաստանի աշխատավորությունը, Հայաստանի յերիտասարդ Կարմիր բանակը, կոմունիստական կուսակցության ղեկավարությունը, կարողացան հակահարված հասցնել լրբացած թշնամուն և ապրիլի 2-ին խորհրդային իշխանությունը նորից վերահաստատվեց Յերևանում։ Դաշնակցական բանդաները զլուխները կորցրած՝ փախան Զանգեզուր, վորտեղից վերջնականապես դուրս քշվեցին Կարմիր բանակի և կոմունիստական ջոկատների կողմից։

ԾԱՆՐ ՎԵՐՔԵՐԻ ԲՈՒԺՄԱՆ ՏԱՐԻՆԵՐԸ

Հայաստանի քաղաքացիական կռիվների ավարտումից հետո, խորհրդային իշխանությունն անմիջապես ձեռնարկեց դաշնակների հասցրած վերքերի բուժման գործին։ Ժողովրդական մասսաներն ամենից առաջ խաղաղություն և շինարար աշխատանքի կարիքն եյին զգում։ Խորհրդային իշխանությունը ավեց ժողովրդին և խաղաղություն և շինարար աշխատանքի հնարավորություն։ Այլևս վերացել եյին ազ-

գամիջյան և իմպերիալիստական կռիվները։ Խորհրդային Ռուսաստանից շարունակվեց ստացվել դրամական և կենսամթերքային ոգնություն։ Գաղթականությունը տեղավորվեց ազատ հողերի վրա և սկսեց աստիճանաբար բարեկեցիկ կյանք ստեղծել իր համար։ Աշխատավոր դյուղացիությունը սկսեց պարապել յերկրագործությունում և կարճ ժամանակում յերկիրը վերածվեց ժրջան աշխատանքի։ Վերքերն սկսեցին բուժվել և ժողովրդական տնտեսությունն արագ քայլերով սկսեց առաջ գնալ։ Բանդված, ավերված գյուղերը և քաղաքներն սկսեցին վերաշինվել, յեղած արդյունաբերությունը վերականգնվեց և Հայաստանի բանվորն ու գյուղացին առաջին անգամ զգացին, վոր իրենք են իրենց աշխատանքի տերերը։ Ընդհանուր առմամբ 1922-ից մինչև 1924 թվականները յեղան Հայաստանի համար դաշնակներից ստացած ծանր վերքերի բուժման տարիները, 1924-ից մինչև 1927 թվականը բարգավաճման տարիներ, իսկ 1928-ից, Խորհրդային Միության առաջին հնգամյակի առաջին տարուց, Խորհրդային Հայաստանը մտավ իր զարգացման նոր փուլի մեջ, յերբ սկսեց վողջ ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցումը։

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԵԼՔԸ

Ի հարկե անողուտ ե նույնիսկ վորև ե համեմատություն անել ժողովրդական տնտեսության 1919 թվի (դաշնակների տիրապետության որոք) ընդհանուր վիճակի և ներկայի միջև։ Բավական ե նշել, վոր միայն 1931 թվի ժողովրդական տնտեսության արտադրանքի տարեկան աճը (79 միլիոն ռուբլի) հավասար ե 1919 թվի վողջ ժողովրդական տնտեսության ամբողջ արտադրանքին։

Հայաստանը չափազանց աննշան արդյունաբերական ձեռնարկներ ե ունեցել ցարական իշխանության տիրապետության որերին։ Դաշնակների որոք այդ չնչին արդյունաբերությունն ել քայքայվում և կրճատվում ե։ Այսպես, որինակ, Հայաստանի արդյունաբերության ամբողջ արտադրանքը 1913 թվին կազմում եր վողջ ժողովրդական տնտեսության արտադրանքի 21 տոկոսը, իսկ 1919 թվին՝ 8 տոկոս։

Ուրիշ պատկեր ե ստանում արդյունաբերությունը խորհրդային իշխանության ժամանակ։ 1928—29 թվին արդյունաբերության ընդհանուր արտադրանքն արդեն հասնում ե 26 տոկոսի, իսկ 1931 թվին՝ 42 տոկոսի։ Այսպիսով արդյունաբերության տեսակարար կշիռը հսկայական քանակությամբ աճում ե տարեցտարի։ Հայաստանը գուտ դյուղատնտեսական յերկրից դառնում ե արդյունաբերական-գյուղատնտեսական յերկիր։

Խնդրուած արագման այդ հաջողութիւնները հնարավոր են դարձել այն պատճառով, վոր մեծ պնդման են ժողոված (ներդրված) արդշու-նարերութեան մեջ և մեծ քանակութեամբ նոր արդշուներեան հետեանքներ են կառուցված: Այսպէս, որինակ, կառուցված են խորհր-դային իշխանութեան որոշ տեքստիլ մեծ գործարան (Լենինականում), կարբիտի, ձեթ-ոճառի, բամբակի գտման, մեքենայական, բազալտի, կոնսերվի և մի շարք այլ գործարանները Յերևանում: Շուտով ավարտ-վում է Դավալույի ցեմենտի մեծ գործարանը, Դարաքիլիսայի քի-միական կոմբինատը և այլն:

Հայաստանի լեռնային արդշունարերութիւնը (հանքերի շահա-գործումը) մեծ ծավալ է ընդունել հատկապէս խորհրդային իշխանու-նութեան որոշ: Այլապէս քան որ Լափանի պղնձահանքերը վերակա-ռուցված են և աշխատում են մեծ թափով: Արթիկի թանկարժեք շի-նարարական քարի՝ տուֆի և Անիի չեչաքարի (պեմզայի) արդշունա-հանումը սկսվել է խորհրդային իշխանութեան որոշ և մեծ չափերի յի հասել: Այդ արդշունարերութեան մեջ աշխատում են տասնյակ հազա-րավոր բանվորներ: Հայաստանի վողջ արդշունարերութիւնը, ըստ հնգամյա պլանի, պետք է տար 363 միլիոն ուրբլ (26—27 թվի ան-փոփոխ գներով) արտադրանք: Այդ պլանը արդեն կատարվում է պրե-թէ 4 տարում:

Առանձնապէս հսկա յեն խորհրդային Հայաստանի նվաճումները յերկրի երկտրոֆիկացիայի և անմշակ դաշտերի վոռոգման ասպարի-զում: Խորհրդային իշխանութեան որոշ կառուցվել են 2 հիդրոէլեկ-տրոկայաններ Յերևանում, 1 Լենինականում, ավարտված է Զորագետ մեծ հիդրոէլեկայանը, կառուցվում է Բանաքեռի ավելի խոշոր հիդրոէլեկ-այանը: Չենք խոսում մի շարք այլ հիդրոէլեկայանների մասին, վորոնք կառուցված են Հայաստանի դանազան շրջաններում: Ցարերի և դաշ-նականների որոշ Հայաստանը չի ունեցել և վոչ մի հիդրոէլեկայան: Հիդրո-էլեկայանների ուժը 1931 թվին կազմում էր 19486 կիլովատ՝ 1928—29 թվի 9702 կիլովատի փոխարեն:

Յերկրորդ հնգամյակի սկզբից—1933 թվից, սկսվում է Սեանի հիդրոէլեկայանների կառուցումը: Ընդամենը 10 հիդրոէլեկայաններ են կա-ռուցվելու Զանգու գետի վրա, վորոնք ողտադրածելու յեն Սեան լճի ջրերը: Այդ հիդրոէլեկայանների ընդհանուր ուժը հավասար է լինելու 500000 կիլովատի: Սեանի սիստեմի հիդրոէլեկայանների կառուցումը Դնեպրոստրոյի ծավալի գործ է և պահանջում է 2—300 միլիոն ուրբ-լու ծախս: Նրանց կառուցումը վոչ միայն խ. Հայաստանի, այլ նաև Անդրկովկասի և վողջ Խորհրդային Միութեան փառավոր նվաճումնե-րից է լինելու:

Հայաստանի անմշակ և խոպան հողերի վոռոգման ասպարիզում նույնպէս մեծ աշխատանք է տարել խորհրդային իշխանութիւնը: 1925 թվին Հայաստանի ջրվող հողերի տարածութիւնն էր 87 հազար հեկտար, իսկ 1932 թվին՝ 144600 հեկտար: Ավարտված է Փոքր Սար-դարաբատի, Կարճահանի, Ելմիածնի, Շիրակի և այլն ջրանցքների կա-ռուցումը: Ավարտվում են նույնպէս Դոբրի հսկա տարածութեան վո-ռոգման աշխատանքները և, Սեանի սիստեմի հիդրոէլեկայանների կա-ռուցման հետ, կլուծվի նաև Մեծ Սարդարաբատի ընդարձակ տարա-ծութիւնները ջրելու խնդիրը:

Ընկ. Լենինը դեռ իր ժամանակին պատվիրել էր Հայաստանի և Անդրկովկասի կոմունիստներին մեծ ուշադրութիւն դարձնել յերկրի վոռոգման և երկտրոֆիկացիայի աշխատանքներին: Կուսակցութիւնը կատարում է մեծ ուսուցչի պատվերները:

Դիւղատնտեսութեան սոցիալիստական վերակառուցման ասպա-րիզում Խորհրդային Հայաստանը հետ չի մնում Խորհրդային Միու-թեան ընդհանուր թափից: Այս ասպարիզում նույնպէս նվաճումներն անվիճելի յեն: Հայաստանի չքավոր և միջակ գյուղացիների 36 տոկոսը համախմբված է կոլտնտեսութիւնների մեջ: Հայաստանում գոյութիւն ունի 67 խորհրդատնտեսութիւններ: Հայաստանի գյուղն ունի մինչև 300 տրակտորներ, իսկ առաջիկա գարնանից Հայաստանի շրջանների կե-սից ավելին պետք է ունենան իրենց մեքենա-տրակտորային կայան-ները: Մեծ չափով աճել է նույնպէս ցանքսերի տարածութիւնը: 1930 թվին Հայաստանի ցանքսերի տարածութիւնը հավասար էր 343 հա-զար հեկտարի, իսկ 1932 թվին՝ 430 հազար: Ցանքսադաշտերի տա-րածութեան ընդարձակումը կատարվել է մեծ մասամբ ի հաշիվ թան-կարժեք տեխնիկական բույսերի՝ բամբակի, ծխախոտի և այլն: Այսպէս բամբակի ցանքսի տարածութիւնը 2 անգամից ավելի յի աճել 1933 թվի համեմատութեամբ: Ներկայումս Հայաստանի խորհրդային իշխա-նութիւնը վճռական միջոցներ է ձեռք առնում ցանքսի վորակը բա-րելավելու և բերքատուութիւնը բարձրացնելու ուղղութեամբ: Կուլ-տուրական շինարարութեան ուղղութեամբ Հայաստանի բանվորներն ու գյուղացիները նույնպէս մեծ նվաճումներ են ձեռք բերել 1931—1932 ուսումնական տարվանից Հայաստանում կիրառված է ընդհա-նուր պարտադիր ուսումը: Բացվել են բազմաթիվ մանկապարտեզներ, դպրոցներ, տեխնիկումներ և այլն: Հայաստանում գոյութիւն ունեն 11 բարձրագոյն ուսումնական հիմնարկներ (ինստիտուտներ), բազ-մաթիվ գրադարաններ, պետական թանգարան, թատրոններ, հանրա-յին մատենադարան և այլն և այլն: Սոցիալիզմ կառուցող բանվորներն ու գյուղացիները մեծ թափով լծված են ուսման գործին, տեխնիկա-յին տիրապետելու գործին:

Կոմունիստական կուսակցութեան ազգային քաղաքականութեանը, վորի հիմնական նպատակն է վերացնել այն հետամնացութեանը (տնտեսական, կուլտուրական, կենցաղային), վոր ունեցել են նախկին ցարական Ռուսաստանի բաղմաթիւ վոյ ռուս ժողովրդները, շնորհիւ ռուսական բուրժուազիայի գաղութային քաղաքականութեան—իր փայլուն արտահայտութեանն է գտել առանձնապէս Անդրկովկասում և Հայաստանում:

Խորհրդային Հայաստանի տնտեսական կուլտուրական այսորում վերելքն ու բուռն զարգացումը արդյունք է լենինյան կուսակցութեան ազգային ճիշտ քաղաքականութեան: Անցյալներում լինելով արդյունաբերութեանը գրեթե զուրկ և հետամնաց մանր գյուղացիական յերկիր, Հայաստանը խորհրդային իշխանութեան որոք հսկայական ոժանդակութեան ստացաւ խորհրդային Ռուսաստանից՝ սոցիալիստական արդյունաբերութեան ստեղծելու և գյուղատնտեսութեանը վերակառուցելու համար: Խորհրդային Հայաստանի պետական բյուջեն միշտ եւ դեֆիցիտային է յեղել: Բյուջեյի դեֆիցիտը միշտ եւ ծածկվել է, սկզբում Խորհրդային Ռուսաստանի և ապա՝ Խորհրդային Միութեան կառավարութեան կողմից: Այսպէս, բյուջեյի դեֆիցիտը 25-26 թվին յեղել է 14 միլիոն ռուբլի, 29-30 թվին՝ 42 միլիոն ռուբլի և 1931 թվին՝ 41 միլիոն ռուբլի: Հիշված և այլ թվականների բյուջեյի այդ բոլոր բացերը ծածկվել են Խորհրդային Միութեան ընդհանուր պետական բյուջեյի կողմից:

Յեթե նկատի ունենանք նաև այն խոշոր գումարները, վորոնք ներդրվել են Խորհրդային Միութեան կողմից Հայաստանի շինարարութեան, հանքային արդյունաբերութեան շահագործման, վոռոգման, ելեկտրոֆիկացիայի ասպարիզում և վորոնք չեն մտնում Խորհրդային Հայաստանի պետական բյուջեյի մեջ, ապա հասկանալի կլինի, թե ինչ հսկայական ոգնութիւն են ստանում Հայաստանի բանվորներն ու գյուղացիները՝ Խորհրդային Միութեան պարգացման ընդհանուր թափից հետ չմնալու համար:

Ի հարկէ Խորհրդային Հայաստանի տնտեսական-կուլտուրական շինարարութեան պատկերը մենք լրիւ չտվինք: Մեծ են այդ նվաճումները բոլոր բնագավառներում: Սակայն այսքանն էլ բավական է, վոր պեսզի հասկանալի լինի, վոր Հայաստանն արագ տեմպերով կերպարանափոխվում է և դառնում է Խորհրդային Միութեան ծաղկած հանրապետութիւններից մեկը: Նախկին հետամնաց ցարական գաղութի աշխատավորութեանն այսոր ձեռք ձեռքի տված անդրկովկասյան մյուս հանրապետութիւնների և ամբողջ Խորհրդային Միութեան բանվորների ու կոլտնտեսականներին, կոմունիստական կուսակցութեան ղեկավարութեամբ, կառուցում է սոցիալիզմի փառավոր շէնքը:

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Հոկտեմբեր...

Յուրաքանչյուր վոդոդեկ և Պիտերը...

Սովը սաստեկ և կյանքին...

Սառել և մարդկային շունչը...

Սակայն ցանկանում և հերենսկին...

Ի՞նչ...

... Ահա, դրիչը խղիղում և հրաման—

— Սեղմել թշնամու կոկորդը, վոնց ուտորա,

Կաղմել կանացի առաջին գունդը

Յեվ ուղարկել զերմառական ֆրոնտ...

Ի՞նչպես... շարունակվելու յե կոնվր...

Բավական չե՞... խաբեցին...

Ջերմակալեցին խորհրդները—

Ջավոդը թողին բուրժույին,

Հողը՝ կալվածատիրո՞ջ...

Ի՞նչ... Կերենսկին ուզում և նիկոլայ լինել,

Սակայն մի ուրիշ ձև...

Այսպես բռնկվեց Պիտերը

Բոլշևիկյան տենդով...

Բայց արդեն կապել եր բոլշևիկյան

Շղթան յերկիրը—

Ջավոդներեց... ծովից... բանակից...

... Յուրա և...

Մրտում և Պետրոգրադը...

Միայն բոլշևիկյան ջերմն և քաղաքում:

Յեվ քաղաքի ծայրին՝

Բանվորական բրիգադը և բարրիկադը:

* *

Անապատային սամուռն ի՞նչ և վոր,

Վոր ալագներեց սյուններ կնետի

Դեպի վեր, յերկինքն, աչտարակի պես.

Ի՞նչ մի անսասան մրրիկ կարող ե
 Իր մի հոսանքով աշխարհ փետի:

Թեկուզ բարձրանա ուկրանոսներից
 Համաշխարհային մի մեծ փոթորիկ
 Ու շարժի Թեկուզ յերկրագունդը հսկա,
 Դարձյալ չի կարող լինել սասանող—
 Վոնց Հոկտեմբերյան ցասկոտ մրրիկ:

Ահա այդպես ե հեղափոխությունը:
 Ժայթքեց սե, մրոտ գործարաններից,
 Հանքերից, խորունկ յերկրի սիրտը հասած,
 Ուր տառապում եր մարդկանց մի ամբոխ

Կյանքից հալածված:
 Նրանք վեր յելան իրենց մազոլոտ,
 Սե ձեռքերի մեջ գրկած հրացան
 Յեվ ընթացք առան Հոկտեմբերի հետ—
 Մրրկոտ ընթացք՝ աշխարհի վրա...
 Յեվ մրրիկի պես քանդեցին հինը
 Ու առաջ անցան...

Յեվ արշավեցին աշխարհի վրա—
 Արյուն սրտերով, բոկոտ վոտներով,
 Սվիններով սուր՝ կոչերով մտքի —
 Գահեր փշրելու վոսկով շաղաղված
 Յեվ բոլոր հողնած բանվոր մարդկության
 Հանելու վոտքի:

* * *

Յուրա ե...

Մըսում ե Պետրոգրադը...
 Միայն բուլեիկյան ջերմն ե քաղաքում
 Յեվ քաղաքի ծայրին, ամեն տեղ
 Բանվորական բարրիկադը ե բրիգադը:
 Կերենսկին ընկած ե...
 Իշխանությունը բուլեիկներին...
 Բայց լինչպես...
 Ահա, նայեցեք, Նեայում
 Արյունը սառույց ե կապել...
 Բանվոր տղերքն են արյուն թափել,
 Վոդոլել բուրժուայի յերկիրը

Ու արմատից փոխել:

Բոլորը, բոլորը յես տեսա
 Կենդանի իմ զույգ աչքերով:
 Իմ ձեռքով բացեցի կրակ:
 Այսպես եր, յերբ փոխվեց մեր դարը,
 Յերբ անհայտ կորավ բորժույն անհագ:
 Տիեզերքի բոլոր աստղունքի մեջ
 Յերկիրը յերկնեց.
 Յերկու զասակարգ յերկրի մայր հողում
 Բացեցին կրակ...
 Հոկտեմբերյան թեժ
 Մրրիկն եր, վոր շարժեց մեր
 Դարը...
 Տասն ուր, միայն
 Տասն ուր, վոր ցնցեցին հսկա
 Աշխարհը...

1930 թ.

ԲՐԻԳԱԴԻ ՅԵՐԳԸ

Յեվ յե՞րբ ե արշալույսը
Մարյամուտը յե՞րբ.
Հազար հուր հույզերով
Բեռնված որն ե թռչում
Այերոյի պես թեթեվ.
Կյանքից կրճատել ենք
Յեվ գիշերը նիրհող,
Վոր լույսի պես թռչենք
Ու չմնանք հետև:

1

Արևի դեմ ծաղկած
Զինարիների պես,
Հռնձքի դեզերն են
Ծածկել կալը.
Վոնց ֆաբրիկի սրտում
Վառվող հնոցը վեհ,
Հնձի սեջ թողել են
Կալսիչ մաշինը:
Յեվ ինչ ե յերգը.
Բեղարած յեզների
Ու քոսոտ կամի,
Ուր դեռ հյուսվում են
Դանդաղ ու դանդաղ
Մաշված յերգերն իմ
ձեր նանի.
Յես տառում եմ այն ժամուն
Վոր Յեսենինն անցավ,
Ուր դեռ շրջում ե
սերը ֆինի:
Թեկուղ ե յերգել են

Բյուր պոետների ախպես,
Ու ախպես յերգել են
Պոետներ շատ,
Բայց նրանց յերգերն ել
Յեղել են իրիկուն—
Աշնան պես դալուկ,
Մղձավանջոտ ու վատ:
Բայց յես ու իմ յերգը
Ճգնավոր չենք յերգեք,
Հուսալքված կյանքից
Մոլոր ու մաղձոտ.
Մենք խնդությամբ յեկանք
Պայքարի հորիզոն
Թաղելու բյուր պոետներ
Լալկան ու թախժոտ:
Իմ յերգը պայքարում՝
Անհաղթ սուր սվին ե,
Խնդառատ հուզում
Հաղթանակի բերք:
Արտերում իմ յերգը
Յեռող մուգ օբյուն ե,
Հին աշխարհը հնձող
Բանականների հեվք:
Յեվ յե՞րբ ե արշալույսը,
Մարյամուտը յե՞րբ
Հազար հուր հույզերով
Բեռնված որն ե թռչում
Այերոյի պես թեթեվ.
Կյանքից կրճատել ենք
Յեվ գիշերը նիրհող
Վոր լույսի պես թռչենք
Ու չմնանք հետև:

2.

Մեր կառուցման ճամբին,
Դիրքերում թեժ մարտի,
Մենք տոկուն ու ամուր
Միաձուլյ ու կոփված,
Ովքեր յերերում են,

Դողումս զախկոտի պես
 Պետք է դեն շարտել
 Շարքերից և դրանց:
 Ո՞վ և հողանել տղերք:
 Ո՞վ է հանգիստ առնում:
 Ո՞վ չի ուզում մաշկել
 Վերջին շերտը մաշկի
 Ո՞վ է դանդաղ քայլում,
 Մեծ արշավի պահին,
 Վերջին հարված տալու
 Հին աշխարհի դահին:
 Ե՛յ ո՞վ է հանգչում
 Մեր տեմպերի դիմաց,
 Յեղնող Սոցիալիզմի
 Գրոհի հանգեպ
 Չար նենգությամբ:
 Կապել փշե թմբեր,
 Կամ իր բուլթ,
 Շահասեր ագռավային
 Խելքով, ուղեկով փախնքոտ,
 Վորպես նենգ դավաճան,
 Պղտորել լենինյան
 Մտքի պարզությունը:
 Թեև մեր ճամբան
 Դժվարին է, անհարթ,
 Բայց մեր վերելքում
 Զարհուրելի չե այդ.
 Բոլշևիկյան բանակը
 Բարձրացել է բյուր յեւ,
 Ու կ'արորի ձեզ մեր
 ճամբում,
 Վոնց սարգերի:

3

Մի տե՛ս, մի տե՛ս, ընկեր,
 Ինչ թափ են վառել,
 Զերմ յեռանդով կարծես
 Արեւ են վառել:
 Մաշինը դող է առել

Տղերքի թափից,
 Սիրտդ խնդաշաղաղ
 Թափ է առել:
 Ե՛խ, կուրծքդ այնպես
 Ուռչում է յեռանդից,
 Սիրտդ այնպես քաղցր
 Մի կարոտ է առնում,
 Վոր պայքարով լցված
 Մեր որերի սրտում
 Այսպես ահեղ թափով
 Բյուր գործեր են դառնում:
 Զան, յենտուղիաստ ջահել,
 Բրիգադիր տղա,
 Դո յեռանդի թափին
 Ո՞վ է դիմանա.
 Սոց-մրցման արշավում
 Հաղթող հպարտ տղա,
 Մեր պայքարում բոսոր
 Հարվածային տղա:
 Յեւ ով դուք գողեր,
 Չարամիտ ու նենգ,
 Մեր հասուն արտում
 Մկներ ֆուսաստու,
 Մտածում եք թիկունքից
 Սով կապիլ յերկրում.
 Բայց ձեր ճամբան
 Իջնում է դեպի Դեպեռու:
 Ձեր գրպանում կաշառք
 Վոսկիներն են զնդում,
 Դուք արդեն սպառազեն
 Բուրժուալի բանակում:
 Մեր դաշույնը մտքի
 Յեւ ծաղկող գործերի,
 Սուր է և հատու յե
 Կայծակներից անդամ.
 Բոլշևիկյան բանակը
 Կայուն ու անսասան,
 Յեւ այսպիսի պահերին
 Յերբեք լուռ չի անցել

— Յեթն թշնամին
 Փորձում ե չհանձնվիլ,
 Նրան պետք է
 Իսկույն վոչնչացնել:
 Կամ դուք...
 Կուլակային դուռնով
 Բեք քաշողներ,
 Կուլակային պարկապղուկ
 Փչողներ,
 Զգո՛ւմ եք արդյոք վիճակը
 Զեր դավադիր,
 Կանգնել կուլակի դիրքին,
 Յեվ ժարտի այս ահեղ պահին
 Դիմադրել դասակարգին:
 Բանվոր դասակարգն
 Իր գործը լավ դիտե,
 Վարժ դեկավար ունի,
 Փարոս առաջնորդներ,
 Անսխալական, վարժ ե
 Վարպետը,
 Ուստա,
 Կուլակային դասակարգի
 Բանն արդեն փուլստա.
 Իսկ դուք, աջեր,
 Կուլակային քաջեր,
 Ինչպես նավթի լամպա,
 Զեղ ել «բարի» ճամբա:
 Հիշել փառքը վաղեմ
 Վերին յերուսաղեմ:

4

Մեր տղերքը շփում են
 Ծովի հորձանքի պես,
 Մեր տղերքի թափից
 Աշխարհը կըղողա.
 Հեյ, մեր ճամբին բանած
 Դուք աշնան ծաղիկներ,
 Կարորենք մենք ձեզ
 Ու կանցնենք հպարտ:

Յեվ խնդում ե բրիգադը
 Առավոտյան շնչով,
 Բեռնած կալսիչը
 Հոնդում ե հպարտ:
 Կյանք կա, կյանք կա,
 Խինդ կա բրիգադում,
 Յեվ յեռանդուն գործում
 Հույս կա անվհատ:
 Ամենքի մերկ կրծքի տակ
 Կարծես մաշին ե ֆուտ,
 Ամենքի յերդող կոկորդում
 Ավտոն ե կարծես գոռում:
 Վոնց ե շփում փոկը,
 Վոնց ե ծափ տալիս
 Յեվ արեթն արբան ե
 Այդ մրցմանը կարծես
 Լուսինը խեղկատակ
 Այդ պայքարի բեմում:
 Բեռնել են կալսիչի ուսին
 Վոսկե հասկ խուրձերը,
 Ու կոխվ ե կարծես,
 Բարրիկադ են բռնել,
 Ամեն մի դեմք կարծես
 Ամպաշաղաղ լուսին,
 Վոր ծիծաղեն թափում,
 Փնջեր խոշոր,
 Մաշինը հեվք ե տալիս,
 Մաշինը մանստրո,
 Յեվ իմ յերգը
 Նրանց դիրիժոր:
 Ու փովում ե յերգը
 Զահել բրիգադի,
 Կալսիչի շող կողերից
 Հեռո՛ւ, հեռո՛ւ,
 Յեվ ցալքերն արևի
 Վարդի փնջերի պես,
 Զենիթից հեղեղում են
 Առո՛ւ... առո՛ւ...

5

Հե՛յ, ելեգանս շլյապավոր,
 Դեղին պրոֆեսոր,
 Գրչավաճառ քննադատ,
 Իմ այս յերգը, գիտեմ,
 Բեզ դուր չի գա,
 Իմ այս յերգը կխոցի
 Բո ուղեղը քոսոտ:

6

Հե՛յ, միստեր Տրոցկի,
 Հե՛յ, սինյոր...
 Դուք կավե կճուճի պես
 Ո՛ւր գլորվեցիք.
 Արյունաշաղաղ վոսկինների լիճը,
 Ճարպոտ շարքերը, պնդաճակաւների,
 Ձեր ձեռքերում,
 Դուք սուր եք սասանում
 Դասակարգի դիմաց:
 Հրի՛ն եք ուղում մատնել
 Դարունքը մեր նոր աշխարհի,
 Բայց դուք լսում ե՞ք
 Ձայնը մեր մաշինի,
 Սոցիալիզմի վերելքը հրաշունչ,
 Մեր տղերքի յերգը,
 Ձարկը նրանց սրտի,
 Այդ այն հարվածայիններն են
 Ձեր գանգը փշրող.
 Վոր դեռ գլորվում ե
 Մեր ճամբի վրա.
 Մենք ծագկում ենք,
 Աճում, բոյ ենք քաշում չինար,
 Մենք կռում ենք կամքը
 Հրավառ աշխարհի,
 Կառուցում ենք ելի,
 Կառուցում ենք անթիվ
 Յեվ մատնելով հրին
 Ձեր ձիւղերը վայրագ:
 Մենք աճում ենք ելի

Ու սլանում արագ:
 Միլիոնների կամքից
 Վուկաններ են պայթել
 Յեվ հաղթել են նոքա
 Թշնամիներ անթիվ,
 Սոցիալիզմի ոգտին
 Վճռվել ե հարցը,
 Թե ով այս պայքարում
 Ումը կհաղթի:
 Միլիոնների կամքից
 Ծնել են գիգանտներ,
 Յեւնող կամարները
 Կապել են ծիրկաթին.
 Իսկ դուք, խոր նենդությամբ,
 Աղաղակով բարձր
 Յերգն եք կանչում հիմա
 Դարձյալ մինարեթին:

ԿԱՐՄԻՐ ՄՈՍԿՎԱ

Կարմիր Մոսկվա,

Աշխարհն էս հուզում,

Ծփում էս ինչպես մի ծով:

Շառաչյունդ ուրբցի հանքափորն է լսում,

Բարձրանալ է ուղում

Քեզ պես զնգոցով:

Աշխարհի սիրտն էս բարախուն ու յեռուն,

Հանգուցն էս հազար նյարդի:

Հազար զնացքի հրաժեշտն էս առնում,

Հազարին ել կանգնում բարևի:

Աշխարհի մեջտեղը կանգնած հաղթական

Բոլորիկյան խոսք էս ասում,

Լսում են խոսքդ իմաստուն ու յեղբայրական

Արևմուտքն ու Արևելքը հոսուն:

Հեռագրի, հեռախոսի, արամվայի և ելեքտրական

Խաչաձևող լարերն անծայր:

Խիտ-խիտ գործված ցանցերի պես հսկա

Պատել են յերեսդ պայծառ:

Կենտրոնումդ

Անառիկ բերդի նման

Կրեմլն է կանգնել ահա,

Աշխատում են աշխատի մեր առաջնորդները հիմա

Արթուն ու զգաստ, ինչպես պահակ:

Կրեմլի պատիկ

Այն պրոլետար մասսան է

Շինել դամբարանը Լենինի,

Վոր շահալույսի մի կուլի Չան Սյան էլ

Համալսարի յերեսը տեսնի,

Յեվ աշխարհի ծայրերից գալիս են մասսաները

Ու դույզ-դույզ կանգնում են հերթի:

Յեվ ամեն մեկը

Աչքերով

Հայտնում է իր սերը,

Բոցավառ կարոտը սրտի:

Բայց գիտեն՝

Լենինին ճանաչել չէն կարող՝

Մտնելով միայն դամբարանը:

Ոոսում է

Լենինյան կենդանի լեզվով

Ամեն մի,

Ամեն մի գործարանը:

Այնտեղ մարտնչում են լենինյան մարտիկները,

Լենինի պես համառ, անհաշտ ու տոկուն,

Յեվ գործ են դառնում Իլիչի պատգամները—

Ապրում ու շնչում են կյանքում:

Սոցմրցումը բռնել է ինչպես կրակ

Նրանցից շատերի սրտերը հիմա:

Սար դժվարություններն ել

Կճեղքեն նրանք

Իմ ընկերներ՝

Բանվորներ Գրիշան ու Կիման...

Շողում են շարք-շարք բարձրաբերձ շենքերդ

Ժպտում են զվարթ ու արի,

Կարծես թե

Պատրաստ կանգնած զինվորներ են,

Լսում են կարմիր հրամանատարին:

Ո՛ր, ինչքան թափոն, կինո, ալկոմը,

Համալսարան ու դպրոց ունես,

Վոր պալատների պես բազմել են գրկումդ

Շքեղ, ծանր ու վես:

Նոր կուլտուրայի, արվեստի դարբնոցն էս,

Ամենավառ մտքերի քուրան,

Հեղափոխության բարձր հնոցն էս,

Լուսավորում էս արևի նման:

Ուր ել նայենք՝

Բարձրացող պատեր,

Ձեռքեր՝ շարող ու ժիր,
Զիգ-զազ յեղնող սանդուխ փայտե,
Աղյուս, ավաղ ու կիր:

Փողոցներումդ

Մարդկանց ալիքները
Հոսում են վարար գետերի նման,
Տրամվայն ու ավտոն

Ինչպես նավերը
Ճեղքում են մարդկանց հոսանքը տիտան:

Քանդում են հին Մոսկվան—

Փողոցները ծուռ-մուռ,
Նրբանցքներն անլույս, վատթար,—
Բարձրանում են թաղեր թափով միահամուռ
Ինչպես մի մեծ անտառ:

Նկուղները թողած՝

Ապրում ե ազատ
Սենյակներում ժաքուր ու յուսավոր
Յերկրի ստեղծագործող վորդին հարադատ,
Առաջվա մի չարքաշ բանվոր...
Դաժան ու մռայլ, բռունցք անցյալից
Այստեղ

Ինչպես հուշարձան,
Դմբեթներն են ցցվել հին ժամերի
Մումիաների պես

Դունատ ու անձայն:

Բայց հենը մեռնում ե,

Անճաղ ու հիվանդ ե—
Մահամերձ վիրավոր ե նա մեր կովում.
Թեև գեռ գնորդ-սպեկուլյանտը
Աղվեսություն ե անում
Շուկայում:

Աճող նորին

Փայփայում ու սնում ես
Ինչպես ժայրը սիրասուն մանկան,
Ծառս լինող հնին ել
Հորում ես,
Հնին՝ գերեզման ես,

Նորին՝ որորան...:

Մոսկվա,

Մոսկվա,

Մասսաներն ես հուզում,

Ծփում ես ինչպես մի ծով,

Շառաչյունդ

Ճնշված աշխարհն ե լսում,

Բարձրանալ ե ուզում իր ըմբոստ վողով:

Մոսկվա 1931 թ.

ՀԵՆՐԻ ՖՈՐԴԻՆ

Յերեկ չեմ,

Ֆորդ,

Քան-քան ծիծաղում եյիր,

Կարկաչում եր քրքիջդ ինչպես առու,

Հմուտ շոֆերի պես դեկի հետ խաղում եյիր,

Ավտոտ թոցնում հեռու-հեռու:

Ամեն բայե

«Հրաշք» գործարանդ

Մի ուր ավտո յեր ծնում իսկույն,

Յեւ թվում եր քեզ,

Վոր ձեր աշխարհը

Մի մշտադալար գարունն է ծաղկուն:

Ասում եյիր դու՝

«Սորհուրդների յերկիրը

Լոկ ճահիճ է,

Խրճիթ,

Սայլ ու սայլապան.

Իսկ այն կառուցման հնդամյա ծրագիրը,

Հիւանդ ուղեղի ցնորք է միայն...»:

Յերեկվա քմծիծաղդ

Այսոր փռխվել է

Ռումբի պես պայթող կոտորած ճիչի.

Տեսնում ես

Խոսում են հնգամյակի թվերը,

Յեւել են ծովի պես հզոր շառաչի:

Ո՛ր, ինչքան զավոդներ են թափով բարձրանում,

Տրակտոր, դաղդյահ, ավտո պատրաստող.

Այդպես

Սուսկերն են միայն յեղնում

Հորդ ու տեղական անձրեվից հետո:

Իսկ գործարանդ

Ձեր յերկրի նսան

Խառնվել: Խճճվել ու կանգնել է հիմա

Ավտոդ ել

Վորպես թեաթափ թռչուն,

Տեղում թփուտում է,

Ել չի թռչում...

Ֆորդ,

Մի հուզիր ավտոդ իջուր,

Մի կողմ քաշիր արագ,

Սլանում է մեր ավտոն սո՛ւր,

Ինչպես կրակ:

Մենք՝

Բանվորներս,

Կառուցման զինվորներ ենք.

Հարվածում ենք անվրեպ, հաստատուն ու համառ,

Մարտնչում ենք մուրճով, ինչպես մարտիկները,

Ավտոյի արագ կառուցման համար:

Մենք ճիգ ենք թափում, վոր անպայման

Մեր ավտոն ձիերին դերազանցի.

Անհրաժեշտ է ավտոն սոցիալիզմի կառուցմանը

Ինչպես մեր բազուկը շինարար, առնացի:

Ձեզ մոտ

Աշխատանքը

Տանջանք է լրիվ,

Ծանր լուծ է,

Ցավ է անծեր

Մեզ մոտ

Աշխատանքն էլ

Ինչպես կռիվը

Հերոսության,

Պարծանքի

Գործ է դարձել:

Դուք,

Միլիոններին հացից զրկելով,

Հիմա յեւ

Ռումբեր եք շինում ավտոյի տեղ,

Վոր նույն միլիոնների արյան ծովերով
Միլիոնների միակ հայրենիքը խեղդեք...

Փորդ,

Հերի՛ք և

Ավտոտ գոռես,

Ել չի՛ գնա,

Իջի՛ր, իջի՛ր,

Առաջնությունը քեզ

Ել մենք չենք զիջի...

Ինչքան ուզում եք հանեք ոյին,

Թեկուզ ձեր կաշվից ել յեկեք,

Խորհրդային Միությունը նստեցրել ենք ավտոյին,

Մեզ չե՛ք հասնի

Յերբեք:

Սրմավիր 1932 թ.

ՍՊԵԿՈՒԼԻԱՆՏ ՍԻՄՈՆԸ

Ճանաչում եք այսորվա սպեկուլյանտին,
Նա՛ վոչ հաստափոր է, վոչ գեր է,
Լավ չնայենք՝ չենք նկատի,
Փոխվել է նրա պատկերը...

Լուսաստղի հետ յեկում է լուսաբացին,
Կտրում է սայլերի ճամբաները,
Վոր իրեն ծախի գյուղացին
Քաղաք տարվող մթերքները:

Հետո յեկ ցեցի պես սուս ու փուս,
Կուզեկուզ,

Քիչ-քիչ,

Իր պործն է տեսնում կողոպտիչ.

Մեկին յերեք է առնում—

Դնողներին թալանում:

Ամեն տեղ սպեկուլյանտ Սիմոնը

Զի մնում նույնը.

Տեղի համեմատ ինչպես Քամելյոնը

Փոխում է գույնը:

Կրճաբաց, ինչպես բանվորը,

Կոխողային շուկա յե մտնում,

Հոտոտում է... վորտեղ հարկավոր է,

Այնտեղ ել հերթի յե կանգնում:

Հերթի մեջ ամպի պես գոռգոռում է,

Ցույց տալով իրեն բանվոր,

Յերբեմն ել մի քանիսին փափսում է.

«Սարսափելի յեն գներն այսոր»:

Յեթե կարգապահ միլիցիոները

Բռնում է գիզված ապրանքները,

Նա փաստաթղթեր է հանում,

Վոր ինքը բանվոր է

Գործարանում

— «Գործարանի համար եմ գնել,

Ընկեր միլիցիոներ»:

Այնքան ճարպիկ է, արթուն

Յեւ զայլի պես ազան, անկշտում,

Վոր մի տեղ չի նստում.

Ինչպես չվող թռչուն

Այնտեղ է թռչում,

Վորտեղ գտնում է իր համար

Մի անկյուն տաքուկ, հարմար:

Բայց ամեն մի անկյուն

Գրավում են իսկույն

Կոռպորատիվն ու կոլխոզը ձուլված

Միասնական ֆրոնտ կազմած

Կայծակի թափով

Գրոհ են տալիս խմբով...

Յեւ պարզ տեսնում է նա,

Վոր ինքը եւ չի մնա.

Քաշ է տալիս իր ժամերը վերջին

Վորպես մահամերձ հիվանդ,

Վորպես

վերջին

սպեկուլյանտ:

1932 թ. Արմավիր

Ի ԾՆԵ ՎԱՐՊԵՏ ՊՈՆՏԸ

Նա պոետ է,

Ի ծնե վարպետ է.

Դրում է ազատ,

Թափով հարագատ,

Ինչպես վոր բառերը դան.

Բառերն ել, հո գիտե՞ք, ուրագան.

Հուր,

Մուր

Կրակ

Կայծակ

Փոթորիկ,

Բյուր—

Այսպես գալիս են նրանք

Առատ, ինչպես աղբյուր:

Բառը մի տող—

Դարձրել է ականջին ող:

Թողել է ժանգոտած վանկերը,

Հանգերը,

Չի գրում յաժքով, անապետով,

Վոչ ել խառն շեշտով

(ձիշտն ասած, նա գրքում

Դրանց՝ իրարից չի ջնկում):

Նա գրում է անշափ հափով,

Ներքին բնաղղի թափով:

Նա կարծում է թե Մայակովսկին

Յերբեք չի սահնակ խոսքին,

ունի հանգեր, հափեր,

Վերցրել է բառեր թափել...

Ի՞նչ:

Բառերը չե՞ն կաշում մի քիչ:

Վոչինչ:

Նարիք չկա սոսինձի,

Թող գրիչն աղատ ըրնձի:

Արմավիր

ԿՈՆԽՈՋԱԿԱՆ

Վորքան ծիծաղ, վորքան խինդ կա:
Կոխողական հասուն արտում,
Ու դաշտերո՞ւմ այս հաղթական
Այսոր մի նոր կյանք ե յեռում:

Ահա յեկանք գործարանից,
Հայն արտերում աշխատելու,
Մեր կոխողնիկ ջան ընկերներ,
Յեկանք սիրով ձեզ ոգնելու:

Հոգն ե անուշ ու մեղմ շոյում
Մեր արտերը լայնատարած,
Հասուն հասկերն են որորվում,
Ծով ե կարծես ալիք առած:

Հուր արեւը կուրծքն ե վառում
Հայնատարած մեր արտերի,
Կոխողնիկի յերդն ե հնչում,
Յերզը հաղթող մեր պայքարի:

Ընդունեցե՛ք դուք մեզ սիրով,
Արևավառ մեր ընկերներ,
Բերել ենք ձեզ խինդ ու կորով,
Վոր աշխատենք մենք աներեր:

Վորքան ծիծաղ, վորքան խինդ կա
Կոխողական հասուն արտում.
Ու պայքարում այս հաղթական
Մի վիթխարի կյանք ենք կերտում:

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ

Ձմն, Հոկտեմբեր, գովքդ այսոր
Միլիոնների սիրտն ե գերել,
Հրանման հեքդ այսոր
Վողջ աշխարհն ե հիմքից ցնցել:

Մեր հանգերը շենացել են,
Տրակտորը թևք ե տլի.
Ջրանցքների մոնչյունից
Աճել, տուռը բերք են տվել:

Գիտես, այսոր հազար ու բյուր
Տոչոր սրտեր են բաբախում,
Բյուրն ել կարոտ հաղթանակիդ,
Գալիքներիդ գովքն են յերգում:

ՀԱՅԿԵՍԵՐԵՐՆ ՀԱՄԱԵԽԱՐՀԱՅԻՆ

Անկում եք կարդում իմ նոր աշխարհին,
Ո՛հ դուք, վողբալի պնակալիզներ

Յեղիօն Չարհնց

Մեր յերկիրն ե անա թափով բարձրանում
Հաղթական, վիթխարի ու աներեր.—
Բարձրունքումն ամպերն են ծխով թանձրանում,
Գործարաններն են այդ մեր փնջում յերկիրն քն ի վեր:

Դուք մեռնում եք մահվան գալարումով,
Հին աշխարհի դուք վոսկեկուռք հորթեր.
Ճգնում եք կրկին մի հուսահատ լարումով
Արյամբ քաղցրացնել ձեր վոսկեհամ շրթեր:

Մենք կերտում ենք անդող ու արի
Հարածուն մի կյանք խնդությամբ անբավ.
Հորդում են անդուլ պայծառ մեր դարի՝
Գնդերն աշխատանքի, վոնց հրաբուլխ, սելավ:

Դուք իմ յերկրին մահ եք կարդում,—
Վոռնում եք հուսահատ և իզուր,—
Խոնչպես եք դուք ձեզ ուղիներ հարթում,
Յերբ մահն ե բաղխում ձեր լուսամուտ և դուռ,

Մենք ամուր ենք, սեզ ու հաղթական,
Ո՞վ կարող ե մեր գործը խանգարի.
Ձգվել են բյուրաբյուր շարքերը մարտական,
Բանվորական գնդերը վիթխարի:

Դուք ցնդվել եք և ձեր աստված ձեզ հետ,
Զուր եք ցանկանում ցնցումով մի խելառ
Մանկանալ նորից, առվակի պես քրքջան
Դառնալ հոսանուտ, դուք ճղճիմացած ճահիճ:

Մեր Հոկտեմբերը տոնական յերթով
Գալիս ե կրկին ուղիներ հարթում.—
Խորտակվում են ձեր դահերը հերթով,
Զուր եք ձեր անկումը մեզ վրա բարդում:

Դուք իմ յերկրին մահ եք կարդում,
Ո՛հ, դուք, բթության դառած ծերուկներ.—
Դուք ինքներդ եք ձեր փառքը ջարդում,
Ձեր յերկրից են ընդվզում բանվորական զնդեր:

Մենք փշրեցինք կուռքը յերկնքի,—
Վորն յերկար դարեր՝ պարզենց մեզ վերքեր.
Ահա մենք բացել ենք արդանդը յերկրի,
Յերկրիցն ենք քաշում մենք վարդե նոր բերքեր:

Դուք իմ յերկրին մահ եք կարդում,
Դուք, փրանսիա, լորդերի յերկրի,
Լոնդոնի վոսկե հորթ՝ դառած Անգլիա:—
Բահ դուք չգիտեք, վոր ձեր խակ արդանդում
Հուզումներ կան այսորվա և ցնցումներ վաղվա:

Դուք իմ յերկրին մահ եք կարդում,
Տենդում եք մզլած ուղեղով ձեր մորմոք.
Հոկտեմբերն ե յերնում, վոր ձեր յերկրում պարզի
Կարմրածուփ գրոշը հրաբորբոք:

Այսօր յեթե չկա, դարձել ե հերթական
Վաղն Հոկտեմբերը կապթի ձեր յերկրում.
Կեցցե համաշխարհային հեղափոխությունը մարտական
Հոկտեմբերը մեծ հանուր աշխարհում:

ՍԵԼՄԱՇՅԱՆ ՆՎԱԳ

Սելմաշյան սիմֆոնիան բազմաշառաչ
Հորդուն հույզերով՝ վարար գետի նման
Սելմաշյան սիմֆոնիան բազմաշառաչ:

Չորս կողմը յեռանդ, մկանների լարում,
Թնդում և առորյան ութմիկ հանգերով.—
Հերոսներն անդուլ թեժ մարտեր են մղում,
Չորս կողմը յեռանդ, մկանների լարում:

Նորից մաքառում, կրկին զորեղ մի զարկ,
Ցեվ ջլուտ բազուկներ՝ թափով կորովի,
Հաղթությամբ առան նոր բերդեր արագ—
Նորից մաքառում, կրկին զորեղ մի զարկ:

Շարվել են հերթով գութաններ պողպատ,
Դուրս գալու մարտի կոխողի դաշտում.
Նրանց հետ ցնծում են շարքացանները հաստառ,
Շարվել են հերթով գութանները պողպատ:

Այս համառ մարտում մենք նոր թևեր առանք,
Թիվ-թվի հետևից յեղնում ու աճում և.
Այս թույլ ողակն առաջ մղենք արագ,
Այս համառ մարտում մենք նոր թևեր առանք:

Կռվում են նրանք անդուլ ու անդադար,
Հնչում և պայքարի հզոր սիմֆոնիան,
Մաշիններն յեղան գետի նման վարար—
Կռվում են նրանք անդուլ ու անդադար:

Կրկին զրավենք նոր դիրքեր, խրամատ,
Այս համառ մարտում, կռվում անողոր,
Գալարվում և նենգոտ թշնամին հուսահատ—
Կրկին զրավենք նոր դիրքեր, խրամատ:

ԲԵՐԲԱՅԱՎԱԼԻՆ

1

Հովը յերգեց, արև շողաց,
Ծփաց մարմանդ ծովը արտի,
Այս դարունը վոսկի տեղաց,
Հասկն աճեց պայքարով լի:
Արտի ծովում՝ հասկեր խըշշուն,
Արտում՝ հմայք, յեռանդ ու սեր.
Հե՛յ, բրիգադիր, ավառ նախշուն,
Հնձենք մինչև լուսնյակ գիշեր:

2

Հե՛յ, Սավետի յերկրի հասկեր,
Առատ բերքի խանդով լեցուն
Ջերմ հայացքով ցորնի շարքեր՝
Վարդի պես վառ բույրով լեցուն:
Հե՛յ Սավետի յերկրի հասկեր,
Թշնամու դեմ՝ թուր ու վահան,
Կոխող տղա՝ կյանքդ գարուն,—
Սիրտդ պայծառ շող ու շաֆրան:

3

Բանվորն յեկավ քեզ ոգնության,
Կոխող տղա՝ կյանքդ գարուն.—
Չավոդ-կոխող մեր Միության՝
Ցերկու թևեր պահենք վառուն:
Բանվորն յեկավ քեզ ոգնության,
Կոխող տղա, յերգիր յերգը.—
Ուժ տանք ջանել մեր միության,
Հնձենք արագ մեր նոր բերքը:

4

Դանդուր մազով աղվոր տղա,
Ցերգենք հասկի, հնձի յերգը
Տես, արևը հուրեր տեղաց,

Յուր ժամկետին ժողովենք բերքը:
Դանգուր մազով աղվոր տղա,
Հատիկ չթողնենք մենք արտի մեջ,
Թեկուզ վերից կրակ տեղա
Մեր յեռանդն ե հար ու անշեջ:

—5—

Դեզը դնենք, կապենք խուրձեր,
Ջահ Սավետի հասկեր վոսկի.—
Հնձենք մինչև լուսնյակ դիշեր,—
Հունձը յելնե աստղեր խանձի:
Դեզը դնենք, կապենք խուրձեր,—
Վոր վոչ մի հասկ դուր չկորչի.
Լարենք, տղերք, յեռանդը մեր.
Խրձերի դեզը յերկինք թռչի:

—6—

Հովը յերգեց, արև շողաց
Ծիփաց մարմանդ ծովը արտի.—
Այս գարունը վոսկի տեղաց,
Հասկն աճեց պայքարով լի:
Հովը յերգեց, արև շողաց,
Հասկերն յելան վոնց ձիգ բարդի.
Հատիկներեց բերկրանք ծորաց,
Բրիգադն անցավ յեռանդի:

ԿԱՌՈՒՅՈՒՄ

Վեհ տիտաններ ենք կառուցում բյուրավոր,
Բյուր տիտաններ աշխատանքի յեն անցնում
Ենտուզիազմի հարվածային տեմպերով
Մեր ճանապարհը յերկաթով ենք մայթում:

Ծլող ծաղիկոյ յերկրում մեր նորավառ
Լուսապայծառ նոր ջահ վառված յերկրում
Ենտուզիազմի հարվածային տեմպերով
Դործարաններ ֆաբրիկաներ են աճում:

Մեր յերկիրը ել նման չի այն հնին
Նա դարձել ե սոցիալիզմի պատվանդան,
Ենտուզիազմի հարվածային տեմպերով
Արշավում ենք, արշավում ենք դեպ առաջ

ՄԵՔԵՆԱՅԻՍ

Ջան մեքենա, աղբեր ջան,
Իմ հարազատ վեհ ընկեր,
Քո շոխողը ձուլվում ե,
Իմ յերգի հետ աներեր:

Ջան մեքենա, աշխատիր,
Հարվածային ընկեր ենք.
Ելեքտրական սրտով մեր
Փշոտ ճաճեն հարթել ենք:

Անբաժան իմ մեքենա,
Շաչիդ, շառաչիդ մատաղ,
Ո՛ր յերբ պտույտ ես դալիս,
Սրտիս կորով ես տալիս:

Ելեկտրական քո սրտով
Իմ սիրտն ել ես դու վառել:
Հետ չմնանք, մեքենա,
Մեր կյանքն անիվ ե դառել:

ՀԱՐՎԱՆՍՑԻՆ ԵՍ

Նվիրում եմ Սեփինի անվան
գործարանի ավագ բանվոր ե
հարվածային ընկ. Բաբայանին

Ինչքա՛ն տարիներ աշխատում ես արի,
Վորպես հաղթական, յեռանդուն բանվոր,
Քո թափը հուզում ե մեզ՝ բոլորիս,
Յես վոնց չյերգեմ վաստակդ այսօր.

Քեզ գործարանում բոլորն են հարգում,
Վորպես մի փորձված ու ավագ բանվոր,
Ու քո հաղթարիս հուր թափից հուզված,
Մենք ել ենք կանգնել դիրքերում բոսոր:

Բրիգադիր ես ցեխում վորպես առաջնորդ,
Խոսում ես, պարզում գործն առորյա,
Վերացնել բրակը, արտադրել միշտ շատ,
Վոր աշխատանքի վորակը բարձրանա:

Կարմիր տախտակին քո ցեխն ե փայլում
Վոր դուք յերկաթն եք հալում ջրի պես.
Ձեր այդ վառ թափը նոր կյանք ե բերում
Մեր այս կառուցված, բարձրացող յերկրում:

Դեմքիդ ժպիտն ե խաղում առնական,
Վորպես ժպտերես, ժիր ջահել տղա.
Ձեն կարող թեքել տարիներն անցած
Քո տոկուն կամքը վառ, բոլշևիկյան:

ՄԵՐ ԱՎՏՈՆ ԱՆԱՆՈՒՄ ԵՐ...

Գերմանիայի Լայպցիկ քաղաքի Կարմիր ճակատայինների կոմիտեն ինձ հանձնարարել էր Հայկ Զուրաբյանի Փլյանց գործարանում տանել ագիտացիոն աշխատանք, յերիտասարդ բանվորներին շրջագրելու և կոմյեբիտմիության շարքերը:

Յես սկսեցի աշխատել. կարողացա կազմակերպել մի խումբ բանվորների, վորոնք գիմուսներ տվեցին կոմյեբիտմիության շարքերն անցնելու համար:

Նրանցից ավելի շատ հետաքրքրվում էր բանվոր Ֆրեյդլինը, վորը 18 տարեկան վառվում էր մի յերիտասարդ եր:

Յերը յես նրան սոսեցա, նա ժպտաց ու բռնեց իմ ձեռքը: Մենք սկսեցինք կամաց կամաց փոփոխվել աշխատանքների մասին: Յես նրան մի քանի խոսք ասեցի: Նա այնքան վողկորվեց, վոր մեքենայի կողքին կանգնած, սկսեց բարձր կանչել—Պավել, մենք կհաղթանալենք:

Բայց նրա այդ խոսքերն արձագանքեցին ամբողջ գործարանում և չանցած յերեք վարկյան, գործարանի առանձին մասերի հերթապահ վոստիկանները պաշարեցին մեզ և անմիջապես քշեցին վոստիկանատուն:

Շրջանային վոստիկանապետ Գրեյդենը մի լավ չափեց մեզ, վոտքից մինչև գլուխ, ինչ վոր վոստիկանակա չափերով, նկարեցին, նրշանակեցին մեր մարմինների մասերի առանձին նշանները:

Յես սկսեցի դիմադրել, յերը վոստիկանապետն առաջարկեց ինձ ցույց տալ իմ թիկունքը: Սակայն իդուր, նրանք արդեն «հոտն առել էին» և յերը վոստիկանապետը տեսավ թիկունքիս խալը, անմիջապես հարցրեց,—չե՞ վոր դու սրանից յերեք ուր առաջ յեղել ես Բերլինում. ի՞նչպես ե, վոր հանկարծակի ծնունդ ես առնում Լայպցիկի Փլյանց գործարանում:

Յես պատասխանելու փոխարեն սկսեցի ծիծաղել, իսկ Ֆրեյդլինը մինչև ականջները կարմրել և կապտել էր: Ինձ թվաց, վոր նա ինձ դավաճանելու յե:

Մեզ յերկուսիս միասին փակեցին մի խոնավ նկուղում, չորս մտրակ խփելուց հետո:

Այդ նկուղն այնքան տարօրինակ ու խղճալի յեր, վոր մեզ թվաց արդեն հասել ենք աշխարհի յեզրը, իսկ զբոսում կյանքն ամբողջապես գոյություն չունի: Յես և Ֆրեյդլինը իրար գրկած, այդ խոնավ ու մութ նկուղում սկսեցինք բարձր-բարձր ծիծաղել: Մեզ ուղևորող վոստիկանը կարծեց, թե մենք խելագարներ ենք:

Յեմ իսկապես, վոստիկանապետ Գրեյդենը մի քանի բռնեցից հետո յեկավ մեզ մոտ: Նայեց մեր աչքերի մեջ, բռնեց մեր գարկերակները (կարծես թե բժշկ լինեք) և զանազան հիմար բաներ ասելուց հետո սկսեց ծեծել մեզ իր վոսկեկոթ մտրակով:

Այս բանը մեզ ավելի շատ գոգոնեց և սկսեցինք ավելի շատ ծիծաղել: Նա ավելի շատ կատաղեց, վոտքը գետին խփելով հեռացավ մութ նկուղից յերեք վոստիկանների հետ, յերկաթե հաստ դուռը փակելով մեզ վրա. իսկ մենք նրա յետևից սկսեցինք սուլել, նրան ավելի շատ կատաղեցնելու համար:

Այս բանը կատարվեց առավոտյան ժամը 12-ին, իսկ յերեկոյան 5-ին մեզ փակավառոյով փոխադրեցին մի ինչ վոր վոստիկանական կենտրոն, այդինքն քաղաքական հանցավորների ստուգման կայան:

Վոստիկանապետը մի մեծ դարպասի առաջ և հանկարծ բռնեցին ներս այնքան արագությամբ, վոր մենք վոչինչ չկարողացանք տեսնել, թե այդ մեծ դարպասը վոր փողոցի վրա յե գտնվում, կամ ինչ տեղում:

Մենք ներս մտանք մի մեծ սենյակ, ուր վոչ վոր չկար: Սենյակը լուսավոր էր ու մաքուր: Լուսավոր սենյակն ավելի զարհուրելի թվաց մեզ, քան խոնավ ու մութ, յերկաթե դռներով նկուղը: Այնտեղ գտնե դուռ կար, իսկ այս սենյակի չորս կողմը հաստ պատեր էյին և այնքան փնտռեցինք, վոչ դուռ կար և վոչ ել դուռ լինելու նշաններ:

— Սատանայի տուն ե—ասաց Ֆրեյդլինը, ծիծաղելով: Բայց իհարկե սատանան այդտեղ գործ չունեք: Յես գիտեյի, վոր բուրժուական դիկտատուրայի պաշտպան, ժանդարմերի պետ, սոցիալ-ֆաշիստ Զեմերլինգի աշխարհն ենք ընկել:

Սոցիալ-ֆաշիստ Զեմերլինգի «մարդախեղտ աշխարհի» մասին ամբողջ Գերմանիայի բանվորությունը գիտե և ծանոթ է, դրա համար ել Ֆրեյդլինն սկսեց ավելի շատ հետաքրքրվել անդուռ սենյակով:

Յերը մենք զբաղված էյինք դուռ փնտռելով հանկարծ սենյակի հատակը վար իջավ, իսկ մենք չգիտեք, թե ինչպես հայտնվեցինք մի ուրիշ սենյակում, վորտեղ մեզ դեմ առ դեմ, սեղանի հետևում նստած էր մի 60 տարեկան ծերուկ:

Նա իր ակնոցներն ուղղեց, և մի բաժակ շամպայն՝ խմելուց հետո, վեր կացավ տեղից, բռնեց Ֆրեյդլինի ձեռքը, ուղիղ նայեց նրա աչքերի մեջ:

Նա ավելի շատ ժպտում էր ու թվում էր, վեր հայրականորեն և խոսում Ֆրեյդլինի հետ:

Յես Ֆրեյդլինի փեշից կամաց քաշեցի, վոր հանկարծ խոսք չըթոցնի այդ կեղծավոր պառավի «սիրալիր» խոսքերի ազդեցության տակ:

Մինչև ժամի 7-ը այդ պառավը մեզ քննեց խաչածե կերպով, մեզից մի բան պոկելու համար, բայց չիղուր, Ֆրեյդլինն ինձ շատ լավ հասկացավ և ավելի բան չասեց: Բայց իմ թիկունքի խալը մեզ դավաճանեց:

Խնդիրը վճռված էր. ինձ պետք է ուղարկեյին կենտրոնական բանտը, քիս Ֆրեյդլինին ուղղում էին ինձանից բաժանել: Սակայն Ֆրեյդլինը չուզեց բաժանվել, պահանջեց, վոր նրան ել ինձ հետ ուղարկեն կենտրոնական բանտը:

Մեզ անմիջապես տեղափոխեցին մի սենյակ, վորտեղ յերկաթե ձողերից պատրաստված լուսամուտից յերեվում էր մեզ համար պատրաստի կանգնած ավտոն:

Մեզ նստեցրին ավտոն:

Ավտոն արագ սլանում էր նեղ ու մութ փողոցներով, մենք չէինք լսում վոչ մի աղմուկ և մեզ վոչ վոք չէր դիմավորում: Ֆրեյդլին 18 նրբացքն անցնելիս ավտոն կանգ առավ ու սկսվեց մարդկային մի ընդհանուր աղմուկ: Մեր հետի վոստիկանները հանեցին ատրճանակներն ու սկսեցին կրակել ամբոխի վրա: Բանվորների մի խումբ պատռեց ավտոյի ծածկոցն ու գցեց ժանդարմների գլխին, իսկ մեզ ուրուրի պես թոցրին ավտոյից:

Կատաղած վոստիկանները սկսեցին ավելի արագորեն կրակել անգն բանվորների վրա, բայց դա յերկար չտևեց: Բոլոր վոստիկանները՝ թվով 12 հոգի, անմիջապես զինաթափվեցին բանվորների կողմից. իսկ մինչ նրանց ոգնություն զալը, բանվորներն սկսեցին ցրվել քաղաքի զանազան փողոցներում, և քաղաքում տիրեց մի ընդհանուր լուռություն: Այդ ժամանակ մեր ազատման գործի կազմակերպիչ բանվոր Ֆլայնցը անմիջապես կապեց Ֆրեյդլինի վերավոր ձեռքը և մենք միասին նստեցինք մի ուրիշ ավտո, վորը նախորոք պատրաստված էր:

Մեր ավտոն սլում էր մի ուրիշ ուղղությամբ և ավտոյի յերրորդ թիկնաթոռը կարմրում էր Ֆրեյդլինի թևից՝ կաթկթող յերիտասարդական թարմ ու կարմիր արյունից:

1) XV-րդ Հոկտեմբեր	5
2) Հաղթանակող սոցիալիզմը	16
3) Լենինյան աղգային քաղաքականությունը հաղթող	26
4) Խորհրդային Հայաստանի XII տարելիցը	35
Հովանթիսյան Արսեն	
ա) Հեղափոխություն	47
բ) Բրիգադի յերգը	50
Առն Լուսենց	
ա) Կարմիր Մոսկվա	58
բ) Հինրի Ֆորդին	62
գ) Սպեկուլիանտ Սիմոն	65
դ) Իժնե վարպետ պոետը	67
Ղայիթյան Վաչե	
ա) Կոլխոզական	68
Ո. Վարոսյան	
ա) Հոկտեմբերյան	69
Արմենակ Խաչենց	
ա) Հոկտեմբեր համաշխարհային	70
բ) Սելմաշյան նվագ	72
գ) Բերքահավաքին	73
Խաչատուր Դարուրի	
ա) Կառուցում	75
բ) Մեքենայիս	76
Սուրեն Հակոբյան	
ա) Հարվածային ես	77
Հովիկ Հակոբյան	
ա) Մեր Ավտոն Սլանում էր	78



Отв. редактор
А. Г. Авакьян
Техн. редактор
Г. Мариарьян.

Ах-4

Сд. в набор 28 X—1932 г.
Сд. в печать 10/XI—1932 г.
Объем 5 печ. листа
Тираж 3000 экз.

Уполкрайлита № 01869 Газ.-ки. тип. СККПО. Статформат А5
Гор. Ростов на Дону.

«Ազգային գրադարան»



ԳԻՆԸ 1 Բ. 50 ԳՈՊ.
Цена 1 Բ. 50 ԿՈՊ.

15821

15679

1
2



На армянском языке

З А Р К

Литературно-худож. сборник

ИЗД-ВО „СЕВЕРНЫЙ КАВКАЗ“

ԳՐԱԴԱՆԵՐՈՒԹՅՈՒՆ

**ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ, ՄՈՍԿՈՎԱԿԱՅԱ ՓՈՂ, 53
ԳՐԱԿԵՆՏՐՈՆ (ԿՆԻԳՈՑԵՆՏՐ)**